Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

(Գործառնություն թիվ 54835)

**ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

(Երեւանի մաքսային եւ լոգիստիկ կենտրոն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

եւ

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ**
**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ**

միջեւ

**ԱՄՍԱԹԻՎ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ** սեպտեմբերի 19

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀՈԴՎԱԾ 1. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ..... 4
Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը ..... 4
Բաժին 1.02. Սահմանումները ..... 4
Բաժին 1.03. Մեկնաբանումը ..... 8
ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ..... 8
Բաժին 2.01. Գումարը եւ արժույթը ..... 9
Բաժին 2.02. Վարկի մյուս ֆինանսական պայմանները ..... 9
Բաժին 2.03. Մասհանումները եւ Հատուկ հաշիվը ..... 11
ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ..... 12
Բաժին 3.01. Ծրագրի մասով այլ դրական պարտավորություններ ..... 12
Բաժին 3.02. Ծրագրի իրականացման գրասենյակը ..... 14
Բաժին 3.03. Գնումները ..... 15
Բաժին 3.04. Բնապահպանական եւ սոցիալական նորմերի պահպանման մասով պարտավորությունները ..... 16
Բաժին 3.05 Խորհրդատուները ..... 17
Բաժին 3.07. Հաշվետվություն ներկայացնելու հաճախականությունը եւ ներկայացման պահանջները ..... 18
ՀՈԴՎԱԾ IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 24
Բաժին 4.01. Ֆինանսական փաստաթղթերը եւ հաշվետվությունները ..... 24
ՀՈԴՎԱԾ V. ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԺԱՄԿԵՏԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ, ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ ..... 25
Բաժին 5.01. Կասեցումը ..... 25
Բաժին 5.02. Մարման ժամկետի կրճատումը ..... 26
Բաժին 5.03. Չեղարկումը ..... 26
ՀՈԴՎԱԾ VI. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ..... 26
Բաժին 6.01. Ուժի մեջ մտնելու նախապայմանները ..... 27
Բաժին 6.02. Վարկի առաջին մասհանման նախապայմանները ..... 27
Բաժին 6.03. Իրավաբանական եզրակացությունը ..... 28
Բաժին 6.04. Ուժի մեջ չմտնելու հիմքով դադարելը ..... 29
ՀՈԴՎԱԾ VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 29
Բաժին 7.01. Ծանուցումները ..... 29
Բաժին 7.02. Փոփոխությունները ..... 31
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 34
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԸ ..... 36
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎԸ ..... 38
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ 43
ՀԱՎԵԼՎԱԾ 5. «ԿԱՆԱՉ» ՆԱԽԱԳԾԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ ..... 65

# ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2025 թվականի սեպտմբերի 19-ի **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** (այսուհետ՝ Վարկառու) եւ **ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ** (այսուհետ՝ Բանկ) միջեւ:

## ՆԱԽԱԲԱՆ

**ՔԱՆԻ ՈՐ** Բանկը հիմնադրվել է տրամադրելու ֆինանսավորում կոնկրետ ծրագրերի համար՝ խրախուսելու անցումը բաց շուկայական կողմնորոշմամբ տնտեսությունների եւ խթանելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները կոնկրետ երկրներում, որոնք ստանձնել են հանձնառություն եւ կիրառում են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության եւ շուկայական տնտեսության սկզբունքները,

**ՔԱՆԻ ՈՐ** Վարկառուն մտադրված է իրականացնել 1-ին հավելվածում ներկայացված Ծրագիրը, որը նախատեսված է օժանդակելու Վարկառուին Հայաստանի Երեւան քաղաքի մոտ Մաքսային եւ լոգիստիկ կենտրոնի («ՄԼԿ») կառուցման հարցում («Ծրագիր»),

**ՔԱՆԻ ՈՐ** Վարկառուն Բանկից խնդրել է օժանդակություն՝ Ծրագրի մի մասի ֆինանսավորման համար,

**ՔԱՆԻ ՈՐ** Բանկը համաձայնել է հասանելի դարձնել ԵՄ Հարեւանության ներդրումային հարթակի (ԵՄ ՀՆՀ) շրջանակներում Եվրոպական միության կողմից տրամադրված ներդրումային դրամաշնորհային ֆինանսավորում՝ 6,000,000 եվրոյի չափով՝ աջակցելու Ծրագրի ֆինանսավորման հարցում՝ Բանկի եւ Վարկառուի միջեւ կնքվելիք դրամաշնորհային համաձայնագրի (Դրամաշնորհային համաձայնագիր) պայմաններին համապատասխան,

**ՔԱՆԻ ՈՐ** Բանկը համաձայնել է հասանելի դարձնել տեխնիկական

համագործակցությանը («ՏՀ») ուղղված միջոցներ՝ աջակցելու Վարկառուին Ծրագրի իրականացման հարցում, այդ թվում՝ Բանկի կողմից կառավարվող եւ միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող դրամաշնորհներ այնպիսի պայմաններով, որոնք պետք է սահմանվեն համապատասխան ՏՀ դրամաշնորհային պայմանագրերով, եւ

**ՔԱՆԻ ՈՐ** Բանկը համաձայնել է, *inter alia* (ի թիվս այլնի), վերոնշյալի հիման վրա Վարկառուին տրամադրել մինչեւ 39,000,000 եվրոյի չափով վարկ՝ համաձայն սույն համաձայնագրում սահմանված կամ նշված պայմանների,

**ՀԵՏԵՎԱԲԱՐ** կողմերը սույնով համաձայնում են հետեւյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

### Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը

Բանկի՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ով թվագրված Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները սույնով ներառվում եւ դառնում են կիրառելի սույն համաձայնագրի նկատմամբ նույն ուժով եւ գործողությամբ, որը դրանք կունենային, եթե ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ (այդ դրույթները՝ համապատասխան փոփոխություններով, այսուհետ կոչվում են Ստանդարտ պայմաններ)։

### Բաժին 1.02. Սահմանումները

Սույն համաձայնագրի ցանկացած հատվածում (ներառյալ՝ Նախաբանը եւ Հավելվածները) օգտագործվելիս, եթե այլ բան նշված չէ կամ համատեքստով այլ բան չի պահանջվում, Նախաբանում սահմանված եզրույթներն ունեն այդտեղ դրանց տրված համապատասխան նշանակությունը, Ստանդարտ պայմաններում սահմանված եզրույթներն ունեն Ստանդարտ պայմաններում դրանց տրված

համապատասխան նշանակությունները, իսկ հետեւյալ եզրույթներն ունեն հետեւյալ նշանակությունները.

«Թույլտվություն» նշանակում է ցանկացած համաձայնություն, գրանցում, հաշվառում, համաձայնագիր, նոտարական վավերացում, հավաստագիր, լիցենզիա, հաստատում, թույլտվություն, լիազորություն կամ ազատում դրանից՝ տրված պետական մարմնի կողմից կամ վերջինիս, որը տրվել կամ մերժվել է բացահայտ գործողությամբ կամ համարվել է տրված կամ մերժված՝ ցանկացած սահմանված ժամկետում չգործելու արդյունքում, ինչպես նաեւ կորպորատիվ, պարտատերերի եւ բաժնետերերի բոլոր հաստատումները կամ համաձայնությունները:

«Վարկառուի լիազորված ներկայացուցիչ» նշանակում է Վարկառուի ֆինանսների նախարարը:

«ClientNet (Հաճախորդների ցանց)» նշանակում է Բանկի եւ իր հաճախորդների միջեւ փաստաթղթերի եւ տեղեկությունների փոխանցման Բանկի առցանց պորտալը եւ ցանկացած փոխարինող կայք, որի մասին Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ծանուցել Վարկառուին:

«Աշխատանքային սահմանված պահանջներ» նշանակում է 2019 թվականի ապրիլով թվագրված եւ Բանկի՝ 2019 թվականի ապրիլով թվագրված Բնապահպանական եւ սոցիալական քաղաքականությանն առնչվող Աշխատանքային պահանջների 1-8-րդ եւ 10-րդ պահանջները (կամ ինչպես կարող է պահանջվել համատեքստով՝ այդ Աշխատանքային պայմաններից ցանկացածը):

«Կատարման քաղաքականություն եւ ընթացակարգեր» նշանակում է Բանկի՝ 2017 թվականի հոկտեմբերի 4-ով թվագրված Կատարման քաղաքականությունը եւ ընթացակարգերը:

«Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագիր» նշանակում է Ծրագրի իրականացման գործակալության կողմից 2024 թվականի մարտին ընդունված եւ Բանկի կողմից 3.04 բաժնի «բ» կետի համաձայն

հաստատված եւ սույն փաստաթղթի 4-րդ հավելվածին կցված՝ բնապահպանական եւ սոցիալական ազդեցության մեղմացման ու բարելավման միջոցառումները՝ 3.04 բաժնի «ե» կետի համաձայն Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ կատարված փոփոխություններով:

«Բնապահպանական եւ սոցիալական ոլորտում հաճախորդների մասին տեղեկությունների բացահայտման վերաբերյալ փաստաթղթեր» նշանակում է բնապահպանական եւ սոցիալական հարցերի վերաբերյալ 2024 թվականի մարտի պատշաճ գնահատման զեկույցի համաձայն Վարկառուի կողմից կամ վերջինիս անունից Բանկին տրամադրված գրավոր տեղեկությունները, որոնք պարունակում են այնպիսի տեղեկատվություն, որը, *inter alia,* վերաբերում է Բնապահպանական եւ սոցիալական հարցերին, ինչպես նաեւ այդ տեղեկությունների մասով Բանկի կողմից ընդունված ցանկացած փոփոխություն կամ լրացում:

«Բնապահպանական եւ սոցիալական օրենք» նշանակում է ցանկացած համապատասխան պետության ցանկացած կիրառելի օրենք, որը վերաբերում է շրջակա միջավայրի, աշխատողների, համայնքների կամ ծրագրի ազդակիր անձանց պաշտպանությանը:

«Բնապահպանական եւ սոցիալական հարց» նշանակում է ցանկացած հարց, որը բնապահպանական եւ սոցիալական ցանկացած օրենքի, աշխատանքային ցանկացած սահմանված պահանջի կամ Բնապահպանական եւ սոցիալական գործողության ծրագրի առարկա է:

«Հարկաբյուջետային տարի» նշանակում է Վարկառուի՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մեկնարկող հարկաբյուջետային տարին:

«Պետական մարմին» նշանակում է Վարկառուի կառավարությունը կամ վերջինիս ցանկացած ստորաբաժանում՝ լինի պետական, շրջանային կամ տեղական, ինչպես նաեւ կառավարության կամ դրա ցանկացած ստորաբաժանման (ներառյալ՝ ցանկացած վերազգային մարմին) կամ դրանց

վերաբերող գործադիր, օրենսդիր, դատական, հարկային, կարգավորող կամ վարչական լիազորություններ կամ գործառույթներ իրականացնող ցանկացած գերատեսչություն, մարմին, մասնաճյուղ, վարչություն, կարգավորող մարմին, դատարան, կենտրոնական բանկ կամ այլ սուբյեկտ, ինչպես նաեւ վերոնշյալներից յուրաքանչյուրի բոլոր պաշտոնատար անձինք, գործակալները եւ ներկայացուցիչները:

««Կանաչ» նախագծի մշտադիտարկման ծրագիր» նշանակում է Բանկի հետ համաձայնեցված ծրագիր, որում նշվում են 5-րդ հավելվածում սահմանված՝ «կանաչ» տնտեսությանն անցմանը, կլիմայական ռիսկերին եւ Փարիզի համաձայնագրի նպատակներին համապատասխանեցմանը վերաբերող՝ կատարողականի առանցքային ցուցանիշները՝ Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ կատարված փոփոխություններով:

«Վարկի արժույթ» նշանակում է եվրո:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության ազգային գնահատում» նշանակում է առաջարկվող Ծրագրի հնարավոր բացասական ազդեցության եւ առավելությունների բացահայտմանն ու գնահատմանն ուղղված ուսումնասիրություն՝ Ծրագրի մանրամասն նախագծում նկարագրված կարգով, ինչպես նաեւ բնապահպանական եւ սոցիալական ազդեցության մեղմացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները եւ կառավարման ծրագրերը:

«Փարիզի համաձայնագիր» նշանակում է Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կողմերի համաժողովի 21-րդ նստաշրջանում ընդունված միջազգային պայմանագիր (FCCC/CP/2015/10/Add.1):

«ԾԻԳ» նշանակում է 3.02 բաժնում նշված ծրագրի իրականացման գրասենյակը:

«Ծրագիրն իրականացնող գործակալություն» նշանակում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:

«Ծրագրի իրականացման աջակցության գծով խորհրդատու» նշանակում է սույն փաստաթղթի 3.03 բաժնի «ա» կետի համաձայն Ծրագիրն իրականացնող գործակալության կողմից ներգրավված խորհրդատու՝ Ծրագիրն իրականացնող գործակալությանը Ծրագրի իրականացման հարցում աջակցելու նպատակով:

«Հատուկ հաշիվ» նշանակում է 2.03 բաժնում եւ 3-րդ հավելվածում նշված հատուկ դեպոզիտային հաշիվը:

«Տրանշ 1-ով տրամադրվող վարկ» նշանակում է 2.01 բաժնի «ա» կետում նշված վարկի գումարը, կամ եթե համատեքստով այլ բան է պահանջվում, դրա՝ տվյալ պահին չմարված մայր գումարը:

«Տրանշ 2-ով տրամադրվող վարկ» նշանակում է 2.01 բաժնի «բ» կետում նշված վարկի գումարը, կամ եթե համատեքստով այլ բան է պահանջվում, դրա՝ տվյալ պահին չմարված մայր գումարը:

«Տրանշ 2-ի Հասանելիության ամսաթիվ» նշանակում է Բանկի կողմից Վարկառուին ծանուցված ամսաթիվ, որի դրությամբ Տրանշ 2-ով տրամադրվող վարկը տրամադրվել է եւ հասանելի է դարձել Մասհանումների համար:

**Բաժին 1.03. Մեկնաբանումը**

Սույն համաձայնագրում կոնկրետ հոդվածին, բաժնին կամ հավելվածին արված հղումը մեկնաբանվում է որպես սույն համաձայնագրի այդ կոնկրետ հոդվածին կամ բաժնին կամ հավելվածին արված հղում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն համաձայնագրով այլ բան է սահմանվում:

## ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Բաժին 2.01. Գումարը եւ արժույթը**

ա) Բանկը համաձայնում է սույն համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով Վարկառուին տրամադրել մինչեւ 39,000,000 (երեսունինը միլիոն) եվրոյի չափով վարկ:

բ) Վարկը բաղկացած է երկու Տրանշից՝ հետեւյալ կերպ.

1) Տրանշ 1՝ 30 միլիոն (երեսուն միլիոն) եվրոյի չափով (Տրանշ 1-ով տրամադրվող վարկ), եւ

2) Տրանշ 2՝ 9 միլիոն (ինը միլիոն) եվրոյի չափով (Տրանշ 2-ով տրամադրվող վարկ):

**Բաժին 2.02. Վարկի մյուս ֆինանսական պայմանները**

ա) Մասհանման նվազագույն գումարի չափը կազմում է 50,000 եվրո:

բ) Կանխավճարի նվազագույն գումարի չափը կազմում է 1,000,000 եվրո:

գ) Չեղարկման նվազագույն գումարի չափը կազմում է 2,000,000 եվրո:

դ) Տոկոսագումարների վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա հունվարի 21-ը եւ հուլիսի 21-ը:

ե) 1) Վարկառուն Տրանշ 1-ով տրամադրվող վարկը մարում է 22 (քսաներկու) հավասարաչափ (կամ հնարավորինս հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 21-ին եւ հուլիսի 21-ին, ընդ որում, Վարկի առաջին մարման ամսաթիվը համարվում է սույն համաձայնագիրը ստորագրելու չորրորդ տարին կամ դրանից հետո, իսկ Տրանշ 2-ով տրամադրվող վարկը՝ 22 (քսաներկու) հավասարաչափ (կամ հնարավորինս հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 21-ին եւ հուլիսի 21-ին, ընդ որում, Վարկի առաջին մարման ամսաթիվը համարվում է Տոկոսագումարների վճարման ամսաթիվը, որն անմիջապես Տրանշ

2-ի Հասանելիության ամսաթվի չորրորդ տարին է կամ դրանից հետո, իսկ Վարկի վերջին մարման ամսաթիվը համարվում է Տոկոսագումարների վճարման ամսաթիվը, որն անմիջապես Տրանշ 1-ի մասով սույն համաձայնագիրը ստորագրելու տասնիհինգերորդ տարվանից հետո է եւ Տրանշ 2-ի Հասանելիության ամսաթվի տասնիհինգերորդ տարին է:

2) Չնայած վերոնշյալին, այն դեպքում, երբ՝ i) Վարկառուն չի մասհանում Վարկի ամբողջ գումարը մինչեւ սույն 2.02 բաժնի «ե» կետում նշված՝ Վարկի առաջին վճարման ամսաթիվը, եւ ii) Բանկը ստորեւ ներկայացված 2.02 բաժնի «է» կետում նշված Հասանելիության վերջին ամսաթիվը երկարաձգում է մինչեւ Վարկի առաջին վճարման ամսաթվից հետո ընկնող օր, ապա Վարկի առաջին վճարման ամսաթվին կամ դրանից հետո կատարված յուրաքանչյուր մասհանման գումար բաշխվում է վճարման համար հավասարաչափ գումարներով՝ Վարկի մարման տարբեր ամսաթվերի միջեւ, որոնք այդ մասհանումից հետո ընկած ժամանակահատվածում են (Բանկն ըստ անհրաժեշտության ճշգրտում է այդ կերպ բաշխված գումարները՝ յուրաքանչյուր դեպքում ամբողջ թիվ ստանալու համար): Բանկը ժամանակ առ ժամանակ Վարկառուին ծանուցում է այդ բաշխումների մասին:

զ) Անկախ սույն համաձայնագրում արտահայտված կամ ենթադրվող որեւէ հակառակ պնդումից՝ Տրանշ 2-ով տրամադրվող վարկը հատկացված չէ, եւ հետեւաբար Բանկը չունի Տրանշ 2-ով տրամադրվող վարկի մասով որեւէ հատկացում կատարելու որեւէ պարտավորություն, եթե այն՝ 1) չի ստացել Վարկառուի կողմից Տրանշ 2-ով տրամադրվող վարկը հատկացնելու մասին հայտ, 2) իր միանձնյա եւ բացարձակ հայեցողությամբ չի որոշել, որ պատրաստ է Տրանշ 2-ով տրամադրվող վարկը հասանելի դարձնել հատկացման համար, եւ 3) չի ծանուցել Վարկառուին այդպիսի դրական որոշման մասին՝ առկայության դեպքում:

է) Տրանշ 1-ով տրամադրվող վարկի Հասանելիության վերջին ամսաթիվը ստորագրման ամսաթվից 5 (հինգ) տարի է կամ այնպիսի հետագա ժամկետ, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է սահմանել եւ այդ մասին ծանուցել

Վարկառուին: Տրանշ 2-ով տրամադրվող վարկի Հասանելիության վերջին ամսաթիվը Տրանշ 2-ի հասանելիության ամսաթվից հինգ տարի է կամ այնպիսի հետագա ժամկետ, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է սահմանել եւ այդ մասին ծանուցել Վարկառուին:

ը) Պարտավորավճարի դրույքաչափը կազմում է տարեկան 0,5%՝ հաշվարկված Տրանշ 1-ով տրամադրվող վարկի եւ Տրանշ 2-ով տրամադրվող վարկի ընդհանուր Հասանելի գումարի նկատմամբ: Պարտավորավճարի դրույքաչափը Տրանշ 1-ով տրամադրվող վարկի նկատմամբ հաշվեգրվում է սույն համաձայնագրի ամսաթվից վաթսուն օր հետո ընկնող ամսաթվից, իսկ Տրանշ 2-ով տրամադրվող վարկի նկատմամբ՝ Տրանշ 2-ի Հասանելիության ամսաթվից վաթսուն օր հետո ընկնող ամսաթվից: Պարտավորավճարը ենթակա է վճարման համապատասխանաբար Տրանշ 1-ով տրամադրվող վարկի եւ Տրանշ 2-ով տրամադրվող վարկի Հասանելի գումարի նկատմամբ՝ Տոկոսագումարների վճարման յուրաքանչյուր ամսաթվին (եթե նույնիսկ այդ ժամկետում որեւէ տոկոսագումար ենթակա չէ վճարման)՝ Տրանշ 1-ով տրամադրվող վարկի համար՝ սկսած Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո Տոկոսագումարների վճարման առաջին ամսաթվին, իսկ Տրանշ 2-ով տրամադրվող վարկի համար՝ Տրանշ 2-ի Հասանելիության ամսաթվից հետո Տոկոսագումարների վճարման առաջին ամսաթվին:

թ) Վարկի նկատմամբ կիրառվում է Լողացող դրույքաչափ:

ժ) Վարկառուն Բանկին վճարում է Միանվագ միջնորդավճար համապատասխանաբար Տրանշ 1-ով տրամադրվող վարկի եւ Տրանշ 2-ով տրամադրվող վարկի առավելագույն մայր գումարի մեկ տոկոսի (1 %) չափով:

**Բաժին 2.03. Մասհանումները եւ Հատուկ հաշիվը**

ա) Հասանելի գումարը կարող է 2-րդ հավելվածի դրույթներին համապատասխան ժամանակ առ ժամանակ մասհանվել՝ ֆինանսավորելու համար՝ Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ողջամիտ արժեքների առնչությամբ կատարված (կամ Բանկի

համաձայնությամբ կատարման ենթակա) ծախսերը:

բ) Չնայած Ստանդարտ Պայմանների եւ Դրույթների 3.05(գ) բաժնին, Վարկառուն որոշել է, որ նախնական միջնորդավճարը չվճարվի հասանելի գումարից եւ փոխարենը նախնական միջնորդավճարը պետք է վճարի իր սեփական միջոցներից: Վարկառուի կողմից նախնական միջնորդավճարի վճարումը պետք է կատարվի Ստանդարտ պայմանների եւ դրույթների 3.05(դ) բաժնի համաձայն:

գ) Վարկառուն Բանկի պահանջով Ծրագրի նպատակների համար բացում եւ վարում է Վարկի արժույթով արտահայտված հատուկ դեպոզիտային հաշիվ Հայաստանի Հանրապետության գանձապետարանում՝ Բանկի համար բավարար պայմաններով: Եթե Վարկառուն ցանկանում է, եւ Բանկը համաձայնում է Մասհանումները կատարել Հատուկ հաշվին դեպոզիտ կատարելու համար եւ ուղղակի վճարումները կատարել այդ հաշվից (2.03 բաժնի «ա» կետի համաձայն կատարվող Մասհանումների փոխարեն), ապա այդ Մասհանումները կատարվում են 3-րդ հավելվածի դրույթներին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

### Բաժին 3.01. Ծրագրի մասով այլ դրական պարտավորություններ

Բացի Ստանդարտ պայմանների IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ Վարկառուն, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, կատարում է (եւ (կամ) ապահովում է, որ կատարվի) հետեւյալը.

ա) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու բավարար միջոցներ եւ այլ ռեսուրսներ, այդ թվում՝ մարդկային ռեսուրսներ, Ծրագիրն ավարտելու համար.

բ) Վարկից ստացված միջոցներն օգտագործել բացառապես Ծրագրի

իրականացման համար՝ համաձայն 1-ին հավելվածի.

գ) ապահովել, որ Ծրագիրն իրականացվի բարեխղճորեն եւ արդյունավետ կերպով՝ ողջամիտ ինժեներական, ֆինանսական եւ գործարար գործելակերպերին համապատասխան, բոլոր կիրառելի օրենքներին համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով շրջակա միջավայրի, առողջության եւ անվտանգության պահանջները, ինչպես նաեւ ընդունելի միջազգային ստանդարտներին եւ գործելակերպերին համապատասխան.

դ) սերտորեն աշխատել Ծրագրի իրականացման աջակցության գծով խորհրդատուի եւ ԾԻԳ-ին աջակցելու նպատակով նշանակված այլ խորհրդատուների հետ.

ե) ձեռք բերել, պահպանել, երկարաձգել բոլոր անհրաժեշտ լիցենզիաները, հաստատումները եւ գրանցումները եւ պահպանել դրանց պահանջները.

զ) ձեռնարկել բոլոր գործողությունները եւ մասնավորապես ընդունել կամ ապահովել, որ ընդունվեն Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր կարգավորումները.

է) պահպանել եւ իրականացնել, ինչպես նաեւ ապահովել, որ Ծրագիրն իրականացնող գործակալության կապալառուները պահպանեն եւ իրականացնեն Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագիրը.

ը) ապահովել, որ շինարարությունն ավարտելուց հետո 12 ամսվա ընթացքում ՄԼԿ-ն ձեռք բերի էկոշինարարության հավաստագիր, ընդ որում, նշվում է, որ այդ հավաստագիրը պետք է համապատասխանի «Էներգաարդյունավետ եւ բնապահպանական նախագծման ուղեցույցի» (LEED) առնվազն արծաթե կամ համարժեք մակարդակին, եւ

թ) ապահովել Ծրագիրն իրականացնող գործակալության կողմից

հետեւյալ պարտավորությունների կատարումը՝ Ծրագրի համար ընտրված տարածքում հողի մաքրման աշխատանքներն սկսելուց առնվազն երեք (3) ամիս առաջ եւ ցանկացած դեպքում մինչեւ Վարկի հատկացումը՝ ֆինանսավորելու համար 1-ին հավելվածի «Կապիտալ ծախսեր» վերտառությամբ «Ա» մասի 2-րդ բաժնում նշված ցանկացած ծախս.

1) ավարտել Շրջակա միջավայրի վրա ազդեցության ազգային գնահատումը եւ զեկույցը ներկայացնել ՎԶԵԲ-ի վերանայմանն ու հաստատմանը,

2) իրականացնել իրականացման վայրի ռիսկերի գնահատում՝ գնահատելու համար նախորդ աղտոտման ռիսկերը եւ մշակելու վերականգնման ծրագիր եւ ներկայացնելու համապատասխան զեկույցը ՎԶԵԲ-ի հաստատմանը, ինչպես նաեւ հատկացնելու անհրաժեշտ ֆինանսական միջոցներ վերականգնմանն ուղղված ցանկացած սահմանված միջոցառման իրականացման համար, եւ

3) իրականացնել հարակից բնակելի գույքի ամրության վերաբերյալ ուսումնասիրություն եւ գնահատել դրանց կայունության ռիսկերը՝ կապված քանդման անհրաժեշտ գործողությունների եւ մեղմելու մասով պահանջվող միջոցառումների հետ եւ զեկույցը ներկայացնել ՎԶԵԲ-ի վերանայմանն ու հաստատմանը:

**Բաժին 3.02. Ծրագրի իրականացման գրասենյակը**

Ծրագրի իրականացման բոլոր հայեցակետերը, այդ թվում՝ Ծրագրի համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնման գործընթացը համակարգելու, կառավարելու, դիտանցելու եւ գնահատելու համար, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը ստեղծի բավարար ռեսուրսներ եւ համապատասխան որակավորմամբ անձնակազմ ունեցող Ծրագրի իրականացման գրասենյակ եւ Ծրագրի իրականացման ամբողջ

ժամանակահատվածում մշտապես շահագործի այն Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

**Բաժին 3.03. Գնումները**

Ստանդարտ պայմանների 4.03 բաժնի նպատակներով Ծրագրի համար անհրաժեշտ եւ Վարկից ստացված միջոցներով ֆինանսավորման ենթակա ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների, ինչպես նաեւ խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացը կարգավորվում է հետեւյալ դրույթներով՝ բացառությամբ Բանկի կողմից այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքի.

ա) ապրանքները, աշխատանքները, ծառայությունները եւ խորհրդատվական ծառայությունները, այդ թվում՝ Ծրագրի իրականացման աջակցության գծով խորհրդատուի ծառայությունները, բացի ստորեւ՝ 3.03 բաժնի «բ» կետում նշված խորհրդատվական ծառայություններից, գնվում են բաց մրցութային ընթացակարգերով.

բ) Հատուկ հաշվի աուդիտորի ծառայությունները գնվում են ուղիղ պայմանագրային ընթացակարգերով.

գ) 3.03 բաժնի «ա» կետի նպատակներով բաց մրցութային ընթացակարգերը սահմանվում են ՎԶԵԲ-ի գնումների կանոնների III բաժնում.

դ) բոլոր պայմանագրերը ենթակա են ՎԶԵԲ-ի գնումների կանոններով սահմանված վերանայման ընթացակարգերին եւ ենթակա են նախապես վերանայման Բանկի կողմից.

ե) ցանկացած պայմանագրի դեպքում, որի մասով վճարումը պետք է կատարվի Հատուկ հաշվից, պետք է հետեւել գնման այնպիսի ընթացակարգերի, որոնք ապահովում են, որ 3.03 բաժնի «գ» կետով սահմանված վերանայման պահանջները բավարարվեն մինչեւ այդ պայմանագրի մասով Հատուկ հաշվից

առաջին վճարումը կատարվելը:

**Բաժին 3.04. Բնապահպանական եւ սոցիալական նորմերի պահպանման մասով պարտավորությունները**

Չսահմանափակելով Ստանդարտ պայմանների 4.02 «ա», 4.04 «ա» «iii» եւ 5.02 «գ» «iii» բաժինների ընդհանուր բնույթը, եւ եթե Բանկն այլ համաձայնության չի գալիս՝

ա) Վարկառուն իրականացնում եւ ապահովում է, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը եւ ցանկացած կապալառու իրականացնի Ծրագիրը՝ Աշխատանքային սահմանված պահանջներին համապատասխան.

բ) չսահմանափակելով վերոնշյալը՝ Վարկառուն բարեխղճորեն իրականացնում է Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագիրը եւ պահպանում է այն, ինչպես նաեւ դիտանցում է այդ ծրագրի իրականացումը եւ ապահովում է, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը բարեխղճորեն իրականացնի եւ պահպանի այն, ինչպես նաեւ դիտանցի այդ ծրագրի իրականացումը՝ դրանում պարունակվող դիտանցման դրույթներին համապատասխան.

դ) Վարկառուն եւ Բանկը կարող են ժամանակ առ ժամանակ համաձայնության գալ փոփոխելու Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագիրը՝ պայմանավորված Ծրագրի հանգամանքների կամ Վարկառուի մասով փոփոխություններով, չնախատեսված դեպքերով եւ դիտանցման արդյունքներով: Չսահմանափակելով վերոշարադրյալի ընդհանուր բնույթը՝

1) եթե առկա է բնապահպանական կամ սոցիալական որեւէ բացասական ազդեցություն կամ խնդիր, որը չի կանխատեսվել կամ դիտարկվել Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրով՝ ամբողջությամբ կամ ըստ դրա լրջության աստիճանի,

2) եթե Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրով սահմանված՝ ազդեցության մեղմացման որեւէ միջոցառում բավարար չէ Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում վերացնելու կամ նվազեցնելու որեւէ բնապահպանական կամ սոցիալական ազդեցություն՝ համապատասխան Աշխատանքային սահմանված պահանջների շրջանակում դիտարկված մակարդակով,

3) եթե Վարկառուի, Բանկի կողմից կամ որեւէ կարգավորող կամ իրավապահ մարմնի տեսչական ստուգմամբ կամ 3.04 բաժնի «դ» կետի համաձայն իրականացված որեւէ աուդիտի շրջանակում հայտնաբերվել է Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրին կամ Բնապահպանական եւ սոցիալական որեւէ օրենքին որեւէ էական անհամապատասխանություն,

ապա Վարկառուն միջոցներ է ձեռնարկում եւ ապահովում է, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը միջոցներ ձեռնարկի ողջամտորեն հնարավորինս շուտ եւ Բանկի համաձայնության դեպքում մշակի եւ Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրում ինկորպորացնի այնպիսի լրացուցիչ կամ լրամշակված՝ ազդեցության մեղմացման միջոցառումներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Աշխատանքային սահմանված պահանջներին, Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրին կամ Բնապահպանական եւ սոցիալական օրենքներին համապատասխանության հասնելու համար՝ յուրաքանչյուր դեպքում Բանկի համար բավարար ձեւով:

**Բաժին 3.05 Խորհրդատուները**

ա) Ծրագրի իրականացման հարցում աջակցություն ցուցաբերելու համար Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Վարկառուն, ըստ անհրաժեշտության, ներգրավում է կամ ապահովում է, որ ներգրավվեն

խորհրդատուներ, եւ օգտվում է վերջիններիս ծառայություններից, որոնց որակավորումները, փորձը եւ տեխնիկական առաջադրանքները բավարար են Բանկի համար, այդ թվում՝

1) Ծրագրի իրականացման աջակցության գծով խորհրդատու՝ ներգրավված 3.03 բաժնի «ա» կետի համաձայն, եւ

2) Կանաչ հավաստագրման խորհրդատվական աջակցություն՝ Էկոշինարարության հավաստագիր ստանալու հարցում Իրականացնող գործակալությանն աջակցելու նպատակով:

բ) Վարկառուն Ծրագրին առնչվող հարցերում կամ Վարկառուի գործողություններին աջակցելու համար ներգրավված ցանկացած խորհրդատուի (այդ թվում՝ անմիջապես Բանկի կողմից նշանակված՝ ՏՀ շրջանակում ֆինանսավորվող խորհրդատուների) անվճար տրամադրում է իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ բոլոր միջոցները եւ աջակցությունը, այդ թվում՝ բոլոր փաստաթղթերը, նյութերը եւ այլ տեղեկություններ, որոնք կարող են վերաբերել նրանց աշխատանքին:

**Բաժին 3.07. Հաշվետվություն ներկայացնելու հաճախականությունը եւ ներկայացման պահանջները**

ա) Ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած մինչեւ Վարկի ամբողջ գումարը մարվելը կամ չեղարկվելը Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը հաշվետու տարվա ավարտից հետո 120 օրվա ընթացքում Բանկ ներկայացնի տարեկան հաշվետվություններ Վարկառուի (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) եւ Ծրագրի հետ կապված Բնապահպանական եւ սոցիալական հարցերի վերաբերյալ՝ Ստանդարտ պայմանների 5.02 բաժնի «գ» կետի «iii» ենթակետում նշված կարգով: Այդ հաշվետվությունները ներառում են տեղեկություններ հետեւյալ կոնկրետ հարցերի վերաբերյալ.

1) տեղեկություններ Վարկառուի (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) կողմից Աշխատանքային սահմանված պահանջների կատարման վերաբերյալ՝ 3.04 բաժնի «ա» կետում նկարագրված կարգով, ինչպես նաեւ տեղեկություններ Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ.

2) տեղեկություններ այն մասին, թե ինչպես է Վարկառուն (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալությունը) դիտանցել Աշխատանքային սահմանված պահանջների եւ Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրի կատարումը Ծրագրում ներգրավված ցանկացած կապալառուի կողմից, եւ այդ կապալառուի կողմից Աշխատանքային սահմանված պահանջների եւ Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագրի չկատարման ցանկացած էական դեպքի, ինչպես նաեւ ցանկացած միջոցի ամփոփ նկարագիր, որը ձեռնարկվել է վերացնելու համար այդ չկատարումը.

3) տեղեկություններ շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի իրականացման եւ Աշխատանքային սահմանված 10-րդ պահանջով անհրաժեշտ բողոքների ներկայացման մեխանիզմի վերաբերյալ, այդ թվում՝ ամփոփ նկարագիր ցանկացած ստացված բողոքի մասին, եւ թե ինչպես է այդ բողոքը լուծվել.

4) տեղեկություններ Վարկառուի (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) կողմից Ծրագրին առնչվող Բնապահպանական եւ սոցիալական օրենքների պահպանման վերաբերյալ, այդ թվում՝ Վարկառուի նկատմամբ հարուցված կամ վերջինիս սպառնացող ցանկացած հայցի, վարույթի, հրամանի կամ քննության, Ծրագրի համար անհրաժեշտ ցանկացած Թույլտվության կարգավիճակի, ցանկացած կարգավորող մարմնի կողմից իրականացված ցանկացած ստուգման արդյունքների, կիրառելի օրենքների, կարգավորումների կամ ստանդարտների ցանկացած խախտման եւ այդ խախտմանն առնչվող ցանկացած շտկող գործողության կամ տույժի նկարագրությունը, Վարկառուի կողմից Ծրագրին առնչվող Բնապահպանական եւ

սոցիալական հարցերի վերաբերյալ որեւէ կարգավորող մարմին ներկայացված ցանկացած էական ծանուցման, հաշվետվության եւ այլ հաղորդակցության, ինչպես նաեւ Բնապահպանական եւ սոցիալական ցանկացած հարցի մասով Վարկառուի համար պարտավորություն առաջացնող ցանկացած այլ հանգամանքի ամփոփ նկարագիրը.

5) տեղեկություններ աշխատանքային առողջության եւ անվտանգության կառավարման եւ Ծրագրի շրջանակներում աշխատանքային առողջության եւ անվտանգության մասին գրառումների, այդ թվում՝ վթարների, ժամանակի կորստի հետ կապված միջադեպերի եւ անհետեւանք վթարների քանակի, Վարկառուի (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) կողմից ձեռնարկված կամ ծրագրված կանխարգելիչ կամ մեղմացնող ցանկացած միջոցառման վերաբերյալ, ինչպես նաեւ տեղեկություններ աշխատանքային առողջության եւ անվտանգության մասին անձնակազմի վերապատրաստման եւ աշխատանքային առողջության եւ անվտանգության կառավարման հետ կապված Վարկառուի (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) կողմից ձեռնարկված կամ ծրագրված ցանկացած այլ նախաձեռնության վերաբերյալ.

6) Բնապահպանական եւ սոցիալական օրենքների ցանկացած փոփոխության ամփոփ նկարագիր, որը կարող է էական ազդեցություն ունենալ Ծրագրի վրա, եւ

7) Վարկառուի կողմից իր բաժնետերերին կամ լայն հանրությանը պարբերաբար ներկայացվող՝ Բնապահպանական եւ սոցիալական հարցերի վերաբերյալ ցանկացած տեղեկության պատճեններ, եւ

8) տեղեկություններ «Կանաչ» նախագծի մշտադիտարկման ծրագրում նշված՝ կատարողականի առանցքային ցուցանիշների վերաբերյալ:

բ) Ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ Վարկառուն կիսամյակային կտրվածքով հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո 60 օրվա ընթացքում մինչեւ Ծրագրի ավարտը ներկայացնում է Ստանդարտ պայմանների

4.04 բաժնի «ա» կետի «v» ենթակետում նշված՝ Ծրագրի վերաբերյալ պարբերական հաշվետվությունները: Այդ հաշվետվությունները ներառում են հետեւյալ կոնկրետ հատկանիշները.

1) հետեւյալ ընդհանուր տեղեկությունները.

Ա) Ծրագրի իրականացման ընթացքում մինչեւ հաշվետվության ամսաթիվը եւ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռք բերված ֆիզիկական առաջընթացը,

Բ) Ծրագրի իրականացման փաստացի կամ ակնկալվող դժվարությունները կամ ձգձգումները եւ դրանց ազդեցությունն իրականացման ժամանակացույցի վրա, ինչպես նաեւ իրական այն փաստացի քայլերը, որոնք ձեռնարկվել կամ պլանավորվել են դժվարությունները հաղթահարելու եւ ձգձգումներից խուսափելու համար,

Գ) Ծրագրի ավարտի ամսաթվի ակնկալվող փոփոխությունները,

Դ) ԾԻԳ-ի անձնակազմի, խորհրդատուների կամ կապալառուների հիմնական կադրային փոփոխությունները,

Ե) հարցերը, որոնք կարող են ազդել Ծրագրի արժեքի վրա,

Զ) ցանկացած զարգացում կամ գործունեություն, որը հավանական է, որ ազդեցություն ունենա Ծրագրի որեւէ մասի տնտեսական կենսունակության վրա:

2) Ֆինանսական հաշվետվություններ, որոնք ցույց են տալիս Ծրագրի յուրաքանչյուր մասի եւ Մասհանումների շրջանակներում կատարված ծախսերի մանրամասները, ինչպես նաեւ հաշվետվություն, որը ցույց է տալիս՝

Ա) նախնական ծախսերի նախահաշիվները,

Բ) վերանայված ծախսերի նախահաշիվները, եթե այդպիսիք կան, նշելով փոփոխությունների պատճառները,

Գ) նախնական ծախսերի նախահաշիվները եւ մինչ օրս կատարված փաստացի ծախսերը,

Դ) նախնական ծախսերի նախահաշվից մինչ օրս կատարված փաստացի ծախսերի տատանումների պատճառները, եւ

Ե) տարվա մնացած եռամսյակների համար հաշվարկված ծախսերը:

3) Սույն համաձայնագրում պարունակվող պարտավորություններից յուրաքանչյուրին համապատասխանության կարգավիճակի հակիրճ շարադրանք:

գ) Անմիջապես Վարկառուի (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) հետ կապված որեւէ միջադեպից կամ պատահարից հետո, որն էական բացասական ազդեցություն ունի կամ հավանական է, որ ունենա շրջակա միջավայրի, աշխատողների կամ հանրային կամ աշխատանքային առողջության կամ անվտանգության վրա, Վարկառուն տեղեկացնում է Բանկին եւ դրանից հետո անմիջապես ծանուցում Բանկին այդ մասին՝ նշելով այդպիսի միջադեպի կամ պատահարի բնույթը եւ այն շտկելու համար Վարկառուի ձեռնարկած ցանկացած քայլ: Եթե միջադեպը ներառում է անձի հետ կապված զգայուն տեղեկություններ կամ հաշվեհարդարի որեւէ ռիսկ, ապա Բանկին ուղղված նախնական ծանուցումը չի ներառում ներգրավված անձանց ինքնության մասին որեւէ մանրամասն տվյալ: Չսահմանափակելով վերոշարադրյալի ընդհանուր բնույթը՝

1) միջադեպը կամ պատահարը վերաբերում է Ծրագրին, եթե այն տեղի է ունենում Ծրագրի համար օգտագործվող որեւէ վայրում, կամ եթե այն առաջացել է Ծրագրի աշխատողների կողմից եւ (կամ) օբյեկտների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների կամ նավերի պատճառով, որոնք օգտագործվում են Ծրագրի համար կամ առնչվում են դրան (անկախ նրանից, թե դրանք օգտագործվում են Ծրագրի համար օգտագործվող որեւէ վայրում, թե՝ ոչ, եւ անկախ նրանից, թե դրանք օգտագործվում են լիազորված, թե չլիազորված անձանց կողմից),

2) միջադեպը կամ պատահարը համարվում է շրջակա միջավայրի կամ հանրային կամ աշխատանքային առողջության կամ անվտանգության վրա էական բացասական ազդեցություն ունեցող, եթե՝

Ա) որեւէ կիրառելի օրենքով պահանջվում է այդպիսի միջադեպի կամ պատահարի մասին ծանուցում որեւէ պետական մարմնի,

Բ) այդպիսի միջադեպը կամ պատահարը ներառում է որեւէ անձի մահ (անկախ նրանից, թե այդ անձն աշխատում է Վարկառուի մոտ, թե՝ ոչ),

Գ) հոսպիտալացում պահանջող ծանր վնասվածք է ստացել մեկից ավելի անձ (անկախ նրանից, թե այդ անձինք աշխատում են Վարկառուի մոտ, թե՝ ոչ),

Դ) այդպիսի միջադեպը ներառում է բռնություն եւ ոտնձգություն, բուլինգ, ահաբեկում եւ (կամ) շահագործում, այդ թվում՝ գենդերային հիմքով բռնության որեւէ ձեւ,

Ե) այդպիսի միջադեպը ներառում է Ծրագրի հետ կապված հարկադիր եւ երեխայի աշխատանք, կամ

Զ) այդպիսի միջադեպը կամ պատահարը հայտնի է դարձել կամ հավանական է, որ հայտնի դառնա հանրությանը՝ լինի դա լրատվամիջոցների կողմից լուսաբանման միջոցով, թե այլ կերպ:

դ) Վարկառուն անհապաղ Բանկին ծանուցում է աշխատողների կամ հանրության անդամների ցանկացած էական բողոքի կամ խնդրագրի մասին, որն ուղղված է կամ առնչվում է Վարկառուին (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալությանը) կամ Ծրագրին, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Վարկառուի (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) կամ Ծրագրի վրա, կամ որը հայտնի է դարձել կամ հավանական է, որ հայտնի դառնա հանրությանը լրատվամիջոցների կողմից լուսաբանման միջոցով կամ այլ կերպ: Ցանկացած այդպիսի ծանուցումից հետո տասն օրվա ընթացքում Վարկառուն ներկայացնում է Բանկի համար բավարար հաշվետվություն՝ նշելով Վարկառուի կողմից այդպիսի բողոքի քննության

արդյունքը եւ Վարկառուի կողմից ձեռնարկված կամ ձեռնարկվել առաջարկվող ցանկացած քայլ՝ բողոքով կամ միջնորդությամբ բարձրացված հարցերը լուծելու համար:

ե) Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը ՎԶԵԲ-ին անհապաղ (սակայն ոչ ուշ, քան այդպիսի ծրագրված կոլեկտիվ ազատման առնչությամբ կայացված ցանկացած որոշումից 60 օր առաջ) ծանուցել ցանկացած ծրագրված կոլեկտիվ ազատման մասին, որը 30-օրյա ժամկետի կտրվածքով ազդում է Վարկառուի ընդհանուր աշխատակիցների առնվազն 10%-ի կամ 30 աշխատակցի վրա (որ թիվն ավելի քիչ է): Ցանկացած ծրագրված կոլեկտիվ ազատման դեպքում, որը 30-օրյա ժամկետի կտրվածքով ազդում է Վարկառուի ընդհանուր աշխատակիցների առնվազն 25%-ի կամ 500 աշխատակցի վրա (որ թիվն ավելի քիչ է), ՎԶԵԲ-ին այդպիսի ծանուցում ուղարկելիս Վարկառուն նաեւ ապահովում է, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը ՎԶԵԲ-ին տրամադրի գործընթացի կառավարման կիրառելի պլան՝ Կատարողականի սահմանված պահանջներին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Բաժին 4.01. Ֆինանսական փաստաթղթերը եւ հաշվետվությունները

ա) Վարկառուն Վարկառուի գերատեսչությունների կամ գործակալությունների (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) մասով, որոնք պատասխանատու են Ծրագրի կամ դրա որեւէ մասի իրականացման համար, վարում է ընթացակարգեր, փաստաթղթեր եւ հաշվետվություններ, որոնք բավարար են միջազգայնորեն ընդունված, հետեւողականորեն կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան Ծրագրի հետ կապված կիրառելի գործառնությունները, ռեսուրսները եւ ծախսերն արտացոլելու, ինչպես նաեւ Ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած մինչեւ Ծրագրի ավարտը Ծրագրի առաջընթացը (այդ թվում՝

դրա ծախսերը եւ այն օգուտները, որոնք ստացվելու են դրանից) դիտանցելու եւ արձանագրելու համար:

բ) Վարկառուն՝

1) ունի յուրաքանչյուր Հարկաբյուջետային տարվա համար Հատուկ հաշվին առնչվող փաստաթղթերն ու հաշվետվությունները, որոնց աուդիտն իրականացվել է Բանկի համար ընդունելի անկախ աուդիտորների կողմից՝ միջազգայնորեն ընդունված աուդիտի սկզբունքներին եւ ստանդարտներին համապատասխան,

2) հնարավորինս շուտ, սակայն ամեն դեպքում՝ յուրաքանչյուր Հարկաբյուջետային տարվա ավարտից ոչ ուշ, քան վեց ամիս հետո, Բանկին տրամադրում է աուդիտորների կողմից այնպիսի ծավալով եւ այնքան մանրամասն ներկայացված հաշվետվություն, որը Բանկը կարող է ողջամտորեն պահանջել, եւ

3) Բանկին տրամադրում է այդ փաստաթղթերի, հաշիվների եւ դրանց աուդիտի վերաբերյալ այնպիսի այլ տեղեկություններ, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել:

## ՀՈԴՎԱԾ V. ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԺԱՄԿԵՏԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ, ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ

### Բաժին 5.01. Կասեցումը

Ստանդարտ պայմանների 7.01 բաժնի «ա» կետի «xvii» ենթակետի նպատակներով սահմանվում է հետեւյալը.

ա) Վարկառուի տարածքում սահմանների մաքսային եւ սահմանների վարչարարության համար կիրառվող օրենսդրությունը եւ նորմատիվ իրավական ակտերը պետք է փոփոխվեն, կասեցվեն, չեղարկվեն, ուժը կորցրած ճանաչվեն

կամ չեղյալ հայտարարվեն այնպես, որ ըստ Բանկի՝ վնասեն Ծրագիրը կամ Վարկառուի կամ Ծրագիրն իրականացնող գործակալության՝ Ծրագիրն իրականացնելու կարողությունը կամ Վարկառուի կողմից սույն համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումը,

բ) Վարկառուն չի կատարել Դրամաշնորհային համաձայնագրով սահմանված իր պարտավորություններից որեւէ մեկը, կամ

գ) Դրամաշնորհային համաձայնագրի առնչությամբ տեղի է ունեցել Ստանդարտ պայմանների 7.01 բաժնի «ա» կետի «x» ենթակետում նկարագրված իրադարձություններից որեւէ մեկը՝ *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով):

**Բաժին 5.02. Մարման ժամկետի կրճատումը**

Ստանդարտ պայմանների 7.06 բաժնի «զ» կետի նպատակներով սահմանվում է հետեւյալը.

ա) տեղի է ունեցել 5.01 բաժնով սահմանված իրադարձություններից որեւէ մեկը, եւ այն շարունակվում է այդ մասին գրավոր ծանուցումը Բանկի կողմից Վարկառուին ներկայացվելուց հետո երեսուն (30) օր:

**Բաժին 5.03. Չեղարկումը**

Եթե ցանկացած պահի Բանկը որոշի, որ Հատուկ հաշվից վճարումը կամ դրա որեւէ օգտագործում կատարվել է 3-րդ հավելվածի պահանջներին անհամապատասխան եւ սահմանում է Վարկի չափը, որի համար կիրառվում է այդպիսի չարաշահումը, ապա Բանկը կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով դադարեցնել Վարկառուի՝ այդպիսի գումարի մասով Մասհանումներ կատարելու իրավունքը: Այդպիսի ծանուցումից հետո Վարկի գումարը չեղարկվում է:

## ՀՈԴՎԱԾ VI. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

**Բաժին 6.01. Ուժի մեջ մտնելու նախապայմանները**

Ստանդարտ պայմանների 9.02 բաժնի «գ» կետի նպատակներով՝ որպես սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար լրացուցիչ պայմաններ սահմանվում է հետեւյալը.

ա) սույն համաձայնագիրը կատարվել եւ տրամադրվել է Վարկառուի անունից եւ պատշաճ կերպով թույլատրվել կամ վավերացվել է խորհրդարանական, կառավարական եւ կորպորատիվ անհրաժեշտ բոլոր գործողություններով,

բ) Դրամաշնորհային համաձայնագիրը կատարվել եւ տրամադրվել է Վարկառուի անունից, եւ դրա ուժի մեջ մտնելու կամ Վարկառուի՝ դրա համաձայն առհանումներ կատարելու իրավունքի մասով բոլոր նախապայմանները, բացառությամբ միայն սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու նախապայմանի, կատարվել են,

գ) Բանկը Վարկառուի անունից ստացել է համապատասխան մարմնի իրավաբանական եզրակացությունները սույն համաձայնագրի եւ Դրամաշնորհային համաձայնագրի վերաբերյալ, եւ

դ) ԾԻԳ-ը ստեղծվել է Ծրագիրն իրականացնող գործակալության կողմից՝ համապատասխան ռեսուրսներով եւ որակավորում ունեցող կադրերով՝ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքներին համապատասխան:

**Բաժին 6.02. Վարկի առաջին մասհանման նախապայմանները**

ա) **Տրանշ 1-ով տրամադրվող վարկ.** Տրանշ 1-ով տրամադրվող վարկի մասով առաջին հատկացումը կատարելու Բանկի պարտավորությունը ենթակա է նախնական կատարման՝ Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ, կամ

Բանկի միանձնյա հայեցողությամբ՝ հետեւյալ նախապայմաններից ամբողջությամբ կամ մասնակիորեն ազատման եւ պայմանների կատարմամբ կամ առանց պայմանների.

1) Ծրագիրն իրականացման գործակալության եւ Ծրագրի իրականացման աջակցության գծով խորհրդատուի միջեւ կնքվել է խորհրդատվական ծառայությունների պայմանագիրը՝ Բանկի համար ընդունելի պայմաններով.

2) Բանկի կողմից պահանջված լինելու դեպքում Վարկառուն բացել է Հատուկ հաշիվը Բանկի համար բավարար պայմաններով, եւ

3) Վարկառուն կատարել է սույն համաձայնագրի 3.01 բաժնի «ժ» կետով սահմանված պարտավորություններն այն դեպքում, երբ այդ հատկացումը կատարվում է 1-ին հավելվածի «Կապիտալ ծախսեր» վերտառությամբ «Ա» մասի 2-րդ բաժնում նշված ծախսերից որեւէ մեկը ֆինանսավորելու համար:

բ) **Տրանշ 2-ով տրամադրվող վարկ.** Տրանշ 2-ով տրամադրվող վարկի մասով առաջին հատկացումը կատարելու Բանկի պարտավորությունը ենթակա է նախնական կատարման՝ Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ կամ Բանկի միանձնյա հայեցողությամբ՝ հետեւյալ նախապայմաններից ամբողջությամբ կամ մասնակիորեն ազատման եւ պայմանների կատարմամբ կամ առանց պայմանների.

1) Բանկն ստացել է Տրանշ 2-ով տրամադրվող վարկը հատկացնելու մասին Վարկառուի հայտը, եւ

2) Բանկը, գործելով միանձնյա եւ բացարձակ հայեցողությամբ, ծանուցել է Վարկառուին, որ Տրանշ 2-ի Հասանելիության ամսաթիվը վրա է հասել:

**Բաժին 6.03. Իրավաբանական եզրակացությունը**

Ստանդարտ պայմանների 9.03 բաժնի «ա» կետի նպատակներով իրավախորհրդատուի եզրակացությունը կամ եզրակացությունները տրվում են

Վարկառուի անունից՝ Արդարադատության նախարարի կողմից:

**Բաժին 6.04. Ուժի մեջ չմտնելու հիմքով դադարելը**

Ստանդարտ պայմանների 9.04 բաժնի նպատակներով սահմանվում է սույն համաձայնագիրը կնքելուց 360 օր հետո ընկնող ամսաթիվը:

## ՀՈԴՎԱԾ VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Բաժին 7.01. Ծանուցումները**

ա) Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի նպատակներով սահմանվում են հետեւյալ հասցեները՝ բացառությամբ, որ ցանկացած ծանուցում համարվում է տրված, եթե հանձնվել է առձեռն, փոստով կամ «pdf» կամ համանման ձեւաչափով՝ էլեկտրոնային փոստով՝

Վարկառուի կողմից՝

Ֆինանսների նախարարություն

Հայաստանի Հանրապետություն

Երեւան, 0010

Մելիք-Ադամյան 1

Հասցեատեր՝ նախարար

Էլ. փոստ՝ secretariat@minfin.am

ՎԶԵԲ-ի կողմից՝

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ

Միացյալ Թագավորություն

Լոնդոն E14 4BG,

Բանկերի փողոց 5

Հասցեատեր՝ Բանկային ծառայություն/Գործառնություն թիվ 54835

Հեռախոս՝ +44 20 7338 6000

Էլ. փոստ՝ BankingServices@ebrd.com

բ) Բանկը կարող է Վարկառուին առաջարկել գրանցվել՝ «ClientNet»-ից կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ ձեւից օգտվելու համար, եւ եթե Վարկառուն եւ Բանկը համաձայնում են օգտագործել «ClientNet»-ը կամ էլեկտրոնային հաղորդակցության այդպիսի այլ ձեւ, ապա Վարկառուի կողմից ցանկացած ծանուցում, դիմում կամ այլ հաղորդագրություն Բանկին կամ Բանկի կողմից Վարկառուին (բացառությամբ որեւէ ծանուցման, դիմումի կամ այլ հաղորդագրության, որը սույն համաձայնագրով կամ Դրամաշնորհային համաձայնագրով պահանջվում է, որ լինի բնօրինակով, վավերացված կամ թղթային օրինակով), կարող է, համաձայն «ClientNet»-ի կամ էլեկտրոնային հաղորդակցության այդպիսի այլ ձեւի պայմանների, տրվել կամ իրականացվել՝ այդ ծանուցումը, դիմումը կամ այլ հաղորդակցություն տեղադրելով «ClientNet»-ում, կամ ուղարկվել էլեկտրոնային հաղորդակցության այդպիսի այլ ձեւի վերաբերյալ համաձայնեցված պայմաններին համապատասխան:

գ) Առձեռն, օդային փոստով կամ ֆաքսիմիլով կամ «ClientNet»-ի միջոցով կամ էլեկտրոնային հաղորդակցության համաձայնեցված մեկ այլ ձեւով փոխանցված ցանկացած ծանուցում, դիմում կամ այլ հաղորդագրություն ուժի մեջ կլինի միայն այն դեպքում, երբ փաստացի ստացվի (կամ հասանելի դարձվի) ընթեռնելի ձեւով՝ պայմանով, որ ցանկացած ծանուցում, դիմում կամ այլ հաղորդագրություն, որն ստացվում է (կամ հասանելի է դարձվում) ժամը 17:00-ից հետո այն վայրում, որտեղ կողմը, որին ուղարկվել է համապատասխան ծանուցումը, դիմումը կամ հաղորդագրությունը, ունի սույն համաձայնագրի նպատակներով հասցեն, համարվում է ուժի մեջ մտած միայն հաջորդ օրը:

դ) Ստորեւ բերված են այն անձանց անունները, պաշտոնները եւ էլեկտրոնային փոստի հասցեները, որոնք նշանակված են որպես Վարկառուի սկզբնական կոնտակտային անձինք ցանկացած առաջարկության նպատակով, որը Բանկը կարող է ուղարկել Վարկառուին «ClientNet»-ի վերաբերյալ.

| ***Անուն*** | ***Պաշտոն*** | ***Էլ. փոստի հասցե*** |
|---|---|---|
| Սամվել Խանվելյան | Ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության պետ | Samvel.khanvelyan@minfin.am |
| Մարինե Մելիքյան | Ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության եւ ռիսկերի կառավարման բաժնի պետ | Marine.melikyan@minfin.am |
| Նաիրա Գրիգորյան | Ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման եւ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ | Naira.grigoryan@minfin.am |
| Մարինե Հարությունյան | Ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման եւ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ | Marine.harutyunyan@minfin.am] |

**Բաժին 7.02. Փոփոխությունները**

Ստանդարտ Պայմանների 10.03 «ա» բաժնի նպատակներով ցանկացած

փոփոխություն, որը Բանկի եւ Վարկառուի համատեղ կարծիքով չի գերազանցում Վարկառուի պարտավորությունները, ուժի մեջ կմտնի փոփոխությունը գործողության մեջ դնող գրավոր փաստաթուղթը Վարկառուի լիազոր ներկայացուցչի եւ Բանկի՝ պատշաճ կերպով լիազորված պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու ամսաթվին:

**Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝** սույն համաձայնագրի կողմերը, գործելով իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն համաձայնագիրը չորս օրինակից եւ հանձնեցին այն Երեւանում՝ Հայաստանի Հանրապետությունում, վերեւում առաջինը նշված օրը եւ տարում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

Ում կողմից՝ ___________________________________

Անուն՝ Վահե Հովհաննիսյան

Պաշտոն՝ ՀՀ ֆինանսների նախարար

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ**

Ում կողմից՝ _______________________________

Անուն՝ Էլիզաբետտա Ֆալչեթի

Պաշտոն՝ Թուրքիայի և Կովկասի հարցերով գործադիր տնօրեն

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուին Երեւանի մաքսային եւ լոգիստիկ կենտրոնի (ՄԼԿ) կառուցումը ֆինանսավորելու հարցում:

2. Ծրագիրը կազմված է հետեւյալ մասերից, որոնք ենթակա են այնպիսի փոփոխությունների, որոնց շուրջ Բանկը եւ Վարկառուն կարող են ժամանակ առ ժամանակ համաձայնության գալ.

**Մաս Ա. Կապիտալ ծախսերը**

ՄԼԿ-ի կառուցումը եւ համապատասխան սարքավորումների տրամադրումը

**Մաս Բ. Խորհրդատվական ծառայություններ «Ա» մասի համար**

ա) Ծրագրի իրականացման Աջակցության հարցերով խորհրդատու (ՎԶԵԲ-ի Վարկով եւ դրամաշնորհատուների կողմից ֆինանսավորվող)

բ) Ծրագրի իրականացման գրասենյակին աջակցող փորձագետներ (ՎԶԵԲ-ի Վարկով եւ դրամաշնորհատուների կողմից ֆինանսավորվող)

**Մաս Գ. Հատուկ հաշվի աուդիտորական ծառայությունները**

ա) Հատուկ հաշվի աուդիտորական ծառայությունները (ՎԶԵԲ-ի վարկային միջոցներից ֆինանսավորվող)

**Մաս Դ. Տեխնիկական համագործակցությունը**

1) Նախնական գնումների աջակցություն (դրամաշնորհատուների կողմից ֆինանսավորվող)

2) Էկոշինարարության հավաստագրման խորհրդատվական աջակցություն (դրամաշնորհատուների կողմից ֆինանսավորվող)

3) Հմտությունների հասանելիություն էլեկտրոնային ուսուցման միջոցով (դրամաշնորհատուների կողմից ֆինանսավորվող)

4) Բնապահպանական եւ սոցիալական հարցերի պատշաճ ուսումնասիրություն եւ իրականացման վայրի ռիսկերի գնահատման վերաբերյալ ուսումնասիրություն (դրամաշնորհատուների կողմից ֆինանսավորվող)

5) Ծրագրի իրականացման Աջակցության հարցերով խորհրդատու (ՎԶԵԲ-ի Վարկով եւ դրամաշնորհատուների կողմից ֆինանսավորվող)

3. Ակնկալվում է, որ Ծրագիրը կավարտվի Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո չորս տարվա ընթացքում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն հավելվածին կցված աղյուսակում սահմանվում են կատեգորիաները, յուրաքանչյուր կատեգորիային հատկացվող Վարկի գումարը եւ յուրաքանչյուր կատեգորիայում ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսային արտահայտությունը:

2. Չհակասելով վերոնշյալ I կետի դրույթներին՝ որեւէ մասհանում չի կատարվում Վարկային համաձայնագրի ամսաթվից առաջ ի հայտ եկած ծախսերի նկատմամբ՝ բացառությամբ Վարկի 20 (քսան) տոկոսը չգերազանցող ընդհանուր գումարի չափով մասհանումների, որոնք կարող են կատարվել 1-ին կատեգորիայի մասով՝ Վարկային համաձայնագրի ամսաթվից առաջ, սակայն Բանկի նշանակած հաստատող անձանց կողմից Բանկային գործառնության հաստատումից հետո ի հայտ եկած ծախսերի հաշվին:

3. (1-ին) կատեգորիայով նախատեսված ծախսերը համաֆինանսավորվում են Դրամաշնորհային ֆինանսավորմամբ եւ Վարկային ֆինանսավորմամբ՝ Դրամաշնորհային համաձայնագրով սահմանված կարգով, այն գումարի չափով եւ համամասնությամբ, որը կողմերը կորոշեն:

**Հավելված 2-ի հավելում**

| **Կատեգորիա** | **Վարկի գումարը՝ հատկացված Վարկի արժույթով** | **Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսային արտահայտությունը** |
|---|---|---|
| 1) Ծրագրի «Ա», «Բ» եւ «Գ» մասերի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ եւ խորհրդատվական ծառայություններ<br>Տրանշ 1<br>Տրանշ 2 | <br><br><br><br>30,000,000 ԵՎՐՈ<br>9,000,000 ԵՎՐՈ | Պայմանագրի արժեքի մինչեւ 100%-ը՝ առանց հարկերի |
| **Ընդամենը** | **39,000,0000 ԵՎՐՈ** | |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎԸ

1. Սույն հավելվածի նպատակներով հետեւյալ եզրույթներն ունեն հետեւյալ իմաստները.

«Թույլատրելի կատեգորիա» նշանակում է 1-ին կատեգորիան:

«Թույլատրելի ծախսեր» նշանակում է Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ողջամիտ արժեքի հետ կապված ծախսեր, որոնք պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից, եւ որոնք ժամանակ առ ժամանակ հատկացվում են Թույլատրելի կատեգորիային՝ համաձայն 2-րդ հավելվածի դրույթների:

«Հատուկ հաշվի աուդիտոր» նշանակում է 4.01 բաժնի «բ» կետում նշված աուդիտորը, որը նշանակվել է որպես Հատուկ հաշվի աուդիտոր՝ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքներին համապատասխան, կամ Վարկառուի կողմից նշանակված եւ Բանկի համար ընդունելի անկախ աուդիտորների որեւէ այլ ընկերություն՝ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքներին համապատասխան:

«Հատուկ հաշվի առավելագույն մնացորդ» նշանակում է 4,000,000 ԵՎՐՈ-ին հավասար գումար:

«Հատուկ հաշվի նվազագույն մասհանման գումար» նշանակում է 1,000,000 ԵՎՐՈ-ին հավասար գումար:

2. Հատուկ հաշվից կատարվող վճարումները կատարվում են բացառապես Թույլատրելի ծախսերի համար՝ համաձայն սույն հավելվածի դրույթների:

3. Այն բանից հետո, երբ Բանկն իրեն բավարարող ապացույցներ է ստանում առ այն, որ Հատուկ հաշիվը պատշաճ կերպով բացվել է Բանկի համար ընդունելի պայմաններին համապատասխան, Վարկառուն կարող է Հասանելի գումարից մասհանել եւ Հատուկ հաշվին մուտքագրել նախնական գումար, որը չի

գերազանցում Հատուկ հաշվի առավելագույն մնացորդը եւ պակաս չէ Հատուկ հաշվի նվազագույն մասհանման գումարից:

4. Դրանից հետո Վարկառուն կարող է Հասանելի գումարից մասհանել հավելյալ գումարներ եւ այդ գումարները մուտքագրել Հատուկ հաշվին՝ ստորեւ՝ 6-րդ կետում նշված սահմանափակումներին համապատասխան եւ յուրաքանչյուր պահանջվող մասհանման համար հետեւյալ պայմանների բավարարմամբ.

ա) Վարկառուն Բանկին ներկայացնում է հաշվի քաղվածքներ եւ փաստաթղթեր, ինչպես նաեւ Բանկի կողմից պահանջվող ցանկացած այլ ապացույց՝ ցույց տալու համար, որ Հատուկ հաշվից հատկացված գումարները պատշաճ կերպով են կիրառվել.

բ) պահանջվող մասհանումն իրականացնելուց եւ այդ մասհանման գումարը Հատուկ հաշվին մուտքագրելուց հետո Հատուկ հաշվի մնացորդը չի գերազանցում Հատուկ հաշվի առավելագույն մնացորդը.

գ) բացառությամբ այն դեպքերի, որոնց վերաբերյալ Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ համաձայնություն ձեռք բերել, Հատուկ հաշվին մուտքագրելու համար պահանջվող մասհանման գումարը չպետք է պակաս լինի Հատուկ հաշվի նվազագույն մասհանման գումարից:

5. Չհակասելով վերը նշված 4-րդ կետի «ա» ենթակետի պահանջին՝ Վարկառուն կարող է Բանկի կողմից ցանկացած պահի ողջամտորեն պահանջվելու դեպքում տրամադրել հաշվետվություն Հատուկ հաշվի մնացորդի եւ այլ մանրամասների, այդ թվում՝ հաշվի քաղվածքների եւ այնպիսի այլ փաստաթղթերի ու ապացույցների մասին, որոնք Բանկը կարող է պահանջել՝ ցույց տալու համար, որ Հատուկ հաշվից կատարված վճարումները կատարվել են սույն հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:

6. Չհակասելով սույն հավելվածի 4-րդ կետի դրույթներին՝ Վարկառուն, եթե Բանկն այլ բան չի համաձայնեցնում, Հասանելի գումարից միջոցներ չի մասհանում Հատուկ հաշվին մուտքագրելու համար՝

ա) եթե Բանկը որեւէ պահի որոշի, որ հետագա բոլոր մասհանումները պետք է կատարվեն 2.03 բաժնի «ա» կետի դրույթներին համապատասխան, կամ

բ) հենց որ Թույլատրելի կատեգորիաներին հատկացված Հասանելի գումարը հավասար է Հատուկ հաշվի առավելագույն մնացորդի գումարի կրկնապատիկին:

Դրանից հետո Թույլատրելի կատեգորիաներին հատկացված մասհանումները պետք է իրականացվեն այնպիսի ընթացակարգերի համաձայն, որոնք Բանկը կարող է սահմանել՝ ծանուցելով Վարկառուին: Այդպիսի հետագա մասհանումները պետք է կատարվեն միայն այն բանից հետո եւ այնքանով, երբ եւ որքանով Բանկը համոզվի, որ այդպիսի ծանուցման ամսաթվին Հատուկ հաշվին մնացած բոլոր գումարները կօգտագործվեն Թույլատրելի ծախսերի համար վճարումներ կատարելու համար:

7. Եթե Բանկը որեւէ պահի որոշում է, որ Հատուկ հաշվից կատարված որեւէ վճարում կամ Հատուկ հաշվի որեւէ օգտագործում՝

ա) կատարվել է այնպիսի ծախսի համար կամ այն չափով, որը չի համապատասխանում սույն հավելվածի 2-րդ կետին, կամ

բ) չի հիմնավորվել Բանկին տրամադրված ապացույցներով,

ապա Բանկը կարող է Վարկառուից պահանջել՝

1) տրամադրել այնպիսի լրացուցիչ ապացույցներ, որոնք Բանկը կարող է պահանջել, եւ (կամ)

2) մուտքագրել Հատուկ հաշվին (կամ Բանկի կողմից այդպես պահանջվելու դեպքում՝ վերադարձնել Բանկին) այդ վճարման չափին կամ դրա՝ այդ կարգով ոչ թույլատրելի կամ հիմնավորված մասին հավասար գումար:

Այն դեպքում, երբ Բանկը վերը նշված «ա» կամ «բ» ենթակետերի համաձայն կայացնում է այդպիսի որոշում, որեւէ մասհանում, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ համաձայնություն է ձեռք բերում, չի կատարվում Հատուկ

հաշվին մուտքագրելու համար մինչեւ այն պահը, երբ Վարկառուն՝ Ա) Հատուկ հաշվին մուտքագրել է կամ Բանկին է վերադարձրել այն գումարը, որը հավասար է այն վճարման (կամ վերջինիս մի մասի) չափին, որը ճանաչվել է ոչ թույլատրելի կամ հիմնավորված, կամ Բ) Բանկին տրամադրել է Բանկի համար բավարար լրացուցիչ ապացույցներ առ այն, որ Հատուկ հաշվից նախկինում մասհանված գումարները պատշաճ կերպով են կիրառվել:

8. Եթե՝

ա) Բանկը որեւէ պահի որոշում է, որ Հատուկ հաշվին չմարված որեւէ գումար չի պահանջվի թույլատրելի ծախսերի հետագա վճարումները ծածկելու համար, կամ

բ) Բանկը Վարկառուին հանձնարարում է Բանկին վերադարձնել գումար՝ համաձայն 7-րդ կետի 2-րդ ենթակետի,

ապա Վարկառուն Բանկի ծանուցումից անմիջապես հետո Բանկին պետք է որպես կանխավճար վճարի Վարկի՝ այդ գումարին համարժեք մի մասը: Այդ նպատակով այն պահանջը, որ Վարկի կանխավճարները պետք է կատարվեն Տոկոսագումարների վճարման ամսաթվերին՝ ստորեւ բերված 10-րդ կետի համաձայն, չեղյալ է հայտարարվում:

9. Վարկառուն կարող է Ստանդարտ պայմանների 3.07 բաժնի «ա» կետի համաձայն Բանկին տրված նախնական ծանուցման դեպքում Տոկոսագումարների վճարման ցանկացած ամսաթվի որպես կանխավճար վճարել Հատուկ հաշվին մուտքագրված բոլոր միջոցները կամ դրանց որեւէ մաս:

10. Վերոնշյալ 8-րդ կամ 9-րդ կետերին համապատասխան ցանկացած կանխավճար կատարվում է Ստանդարտ պայմանների 3.07 բաժնի համաձայն, այնուամենայնիվ, պայմանով, որ՝ ա) չհակասելով Ստանդարտ պայմանների 3.07 բաժնի «գ» կետի «i» ենթակետի «Ա» պարբերությանը՝ այդպիսի կանխավճարի վրա չի տարածվում Նվազագույն կանխավճարի գումարը, եւ բ) ցանկացած կանխավճար, որը կատարվել է Տոկոսագումարների վճարման ամսաթվից բացի

այլ ամսաթվի, ենթակա է Պայմանների փոփոխությունների հետ կապված ծախսերի վճարման՝ համաձայն Ստանդարտ պայմանների 3.10 բաժնի: Վերոնշյալ 8-րդ կամ 9-րդ կետերի համաձայն կատարված ցանկացած կանխավճար կիրառվում է Բանկի կողմից՝ համաձայն Ստանդարտ պայմանների 3.07 բաժնի «գ» կետի «ii» ենթակետի:

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

| Թիվ | Գործողություն | Բնապահպանական եւ սոցիալական ռիսկեր (Պարտավորություն/առավելություններ) | Պահանջ (Օրենսդրական, ՎՁԵԲ, ԱՊ Լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն | Ժամանակացույց | Թիրախ եւ հաջող իրականացման գնահատման չափանիշներ | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱՊ1** | **Բնապահպանական եւ սոցիալական ազդեցությունների եւ հարցերի գնահատում եւ կառավարում** | | | | | | |
| 1.1 | Վերջնական մանրամասն նախագծի հիման վրա պատվիրել որակավորված ընկերության ԾՄՍԱԳ ուսումնասիրություն՝ համաձայն ՎՁԵԲ-ի ԱՊ 1-ի վերաբերյալ ուղեցույցի: Ուղեցույց - Կատարողականի պահանջներ 1. Բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի եւ ազդեցությունների գնահատում եւ կառավարում: ԾՄՍԱԳ-ի շրջանակային վարժությունը պետք է ներառի Ծրագրին առնչվող բոլոր ուղղակի եւ անուղղակի բնապահպանական եւ սոցիալական ազդեցություններն ու խնդիրները, ներառյալ կուտակային ազդեցությունները, մնացորդային ազդեցությունները եւ Ծրագրին առնչվող կառույցների հետ կապված ազդեցությունները: ԾՄՍԱԳ-ը պետք է պարունակի նաեւ փոփոխությունների կառավարման ընթացակարգ՝ թույլ | Շինարարական աշխատանքները չեն կարող իրականացվել մինչեւ Շրջակա միջավայրի նախարարությունից վերջնական բնապահպանական փորձաքննության ստացումը:<br><br>Բացի այդ, ԾՄՍԱԳ-ը կսահմանի բոլոր մեղմացնող միջոցառումները, որոնք անհրաժեշտ են Ծրագրի հնարավոր բնապահպանական եւ սոցիալական ռիսկերը նվազեցնելու համար | ԱՊ1 ՎՁԵԲ Ազգային օրենսդրություն | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, անկախ խորհրդատուներ | Աշխատանքների/կապիտալ ծախսերի համար վարկի առաջին տրամադրումից առաջ եւ ամեն դեպքում շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ | Բանկին մեկնաբանությունների համար ներկայացված շրջանակային հաշվետվության տեխնիկական առաջադրանքները:<br>ԾՄՍԱԳ հաշվետվության նախագծի ներկայացումը Բանկին՝ վերանայման եւ հաստատման համար:<br><br>Շրջակա միջավայրի նախարարությունից վերջնական բնապահպանական փորձաքննության ստացում:<br><br>Բանկի կողմից ընդունված զեկույց: | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տալու ժամանակին գնահատել սկզբնական նախագծի, հզորության եւ այլնի ցանկացած փոփոխության ազդեցությունը: | | | | | | |
| 1.2 | ՇՄՍԱԳ-ի շրջանակներում եւ շրջանակների որոշման արդյունքների հիման վրա իրականացնել անհրաժեշտ դաշտային եւ լաբորատոր ուսումնասիրություններ Ծրագրի տարածքում շրջակա միջավայրի եւ սոցիալական պայմանների վերաբերյալ: | Բնապահպանական եւ սոցիալական ելակետային պայմանների վերաբերյալ տվյալների բացակայությունը կարող է առաջացնել տարբեր բնապահպանական եւ սոցիալական խնդիրներ: | ԱՊ1 ՎՁԵԲ Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, անկախ խորհրդատուներ | ՇՄՍԱԳ-ի շրջանակն երում եւ մինչեւ աշխատան քների/կա պիտալ ծախսերի համար վարկի մասհանու մը | Դաշտային եւ լաբորատոր հետազոտությունների իրականացում սահմանված ժամանակացույցով | - |
| 1.3 | Հիմնվելով առկա «As-built» փաստաթղթերի, տեղանքի քարտեզների, գծագրերի, առկա երկրաբանական եւ հիդրոերկրաբանական քարտեզների եւ | Տարածքը Պաշտպանության նախարարության նախկին սեփականությունն է եւ ունի ածխաջրածնային աղտոտման նշաններ: Կա այլ վտանգավոր | ՎՁԵԲ ԱՊ1 ԱՊ3 | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, անկախ մասնագիտացված | Մինչեւ աշխատան քների/կա պիտալ ծախսերի | Տարածքի ռիսկի գնահատման զեկույցը ներկայացվել է Բանկին: | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տեղանքի այցելության վրա՝ իրականացնել տեղանքի ռիսկի գնահատում՝ հողի/ստորգետնյա ջրերի ցանկացած ժառանգական աղտոտվածություն բացահայտելու եւ զգայուն ընկալիչների վրա ռիսկերը գնահատելու համար: Տեղանքի ռիսկի գնահատման արդյունքների հիման վրա պատրաստել գործողությունների ծրագիր եւ ՎՉԵԲ-ի հետ համաձայնեցնել հետագա քայլերը: | նյութերի առկայության ռիսկ: Հետեւաբար, ռիսկերը պետք է պատշաճ կերպով գնահատվեն եւ սահմանվի նախնական աղտոտվածությունը: | | խորհրդատուներ | համար վարկի մասհանու մը եւ ամեն դեպքում՝ մինչեւ հողի մաքրման/շ ինարարու թյան որեւէ աշխատան ք | Գործողությունների ծրագիրը համաձայնեցվել է ՎՉԵԲ-ի հետ: | |
| 1.4 | Մշակել Բնապահպանական եւ սոցիալական կառավարման պլան եւ ներառել այն ՇՄՍԱԳ-ի զեկույցում որպես դրա մաս<br>ԲՍԿԾ-ով պետք է հստակ որոշվի մեղմացմանն ուղղված ներկայացված միջոցառումների իրականացման գործընթացները, մեթոդները եւ ժամանակացույցը: | Վտանգ, որ ԲՍԿԾ միջոցառումները նույնպես չեն իրականացվի, եթե առկա չէ իրականացման հստակ գործընթաց | ՎՉԵԲ ԱՊ1 լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, անկախ խորհրդատուներ | Մինչեւ աշխատան քների/կա պիտալ ծախսերի համար վարկի մասհանու մը եւ ամեն դեպքում՝ մինչեւ շինարարա կան աշխատան քների մեկնարկը | Շրջակա միջավայրի նախարարությունից բնապահպանական փորձաքննության վերջնական արդյունքները ստանալը<br><br>Բանկի կողմից ընդունված զեկույց | - |
| 1.5 | Մշակել եւ ներկայացնել շինարարական գործունեության համար նախատեսված Շինարարությանն առնչվող բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ)՝ հաշվի առնելով ՇՄՍԱԳ-ն, ԲՍԿԾ-ն եւ մրցութային փաստաթղթերի պահանջները: Ներառել ԲՍԿԾ-ն, ՇՄՍԱԳ-ն եւ ՇԲԿՊ-ն | ՇԲԿՊ-ով կամփոփվեն եւ կտեղայնացվեն համապատասխան փաստաթղթերում նկարագրված բնապահպանական եւ սոցիալական բոլոր միջոցառումները | ՎՉԵԲ ԱՊ1 լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | EMP accepted by the Engineer/Supervising agency | Ճարտարագետի/վերահսկող գերատեսչության կողմից ընդունված ՇԲԿՊ | - |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մրցութային փաթեթի հիման փաստաթղթերում: | | | | | | | |
| 1.6 | Մշակել եւ իրականացնել առողջության եւ անվտանգության (ԱԱ քաղաքականություն), շրջակա միջավայրի (Շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականություն) եւ սոցիալական հայեցակետերի (Սոցիալական քաղաքականություն) քաղաքականություն | Քաղաքականությունները կօգնեն ավելի արդյունավետ կերպով հսկողություն իրականացնել մեղմացմանն ուղղված միջոցառումների արդյունավետության նկատմամբ | ՎՋԵԲ ԱՊ1<br>Լավագույն փորձը | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Մինչեւ շինարարական աշխատանքները սկսելը | Քաղաքականությունները ներառված են համապատասխան փաստաթղթերում եւ իրականացման մեջ | - |
| 1.7 | Մշակել շրջակա միջավայրի եւ սոցիալական պարտավորությունների գրանցամատյան՝ հիմնվելով ՇՄՍԱԳ-ում, այս ԲՍԳՊ-ում, տեղանքի ռիսկերի գնահատման, ասբեստի եւ շենքերի ամբողջականության հետազոտությունների, ինչպես նաեւ կիրառելի կատարողական պահանջների համապատասխան դրույթների վրա, եւ ներառել դրանք շինարարական կապալառուների համար մրցույթային պահանջներում: Ներառել շրջակա միջավայրի եւ սոցիալական չափանիշներ մրցույթային գնահատման ընթացակարգում: | Եթե համապատասխան մեղմացնող միջոցառումները չեն ներառվել մրցույթի պահանջներում եւ հետագայում շինարարության կապալառուների առաջարկներում եւ պայմանագրերում, կա անհամապատասխանության ռիսկ, որը կարող է բացասական հետեւանքներ ունենալ Ծրագրի վրա: | ՎՋԵԲ ԱՊ1 | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ | Մաքսային եւ լոգիստիկ կենտրոնի կառուցման մրցույթի մեկնարկից առաջ | Մրցույթի տեխնիկական բնութագրերում ներառված են համապատասխան Բնապահպանական եւ սոցիալական գործողությունները, կատարողականի չափանիշները եւ չափորոշիչները: Մրցույթի գնահատման ընթացակարգը ներառում է Բնապահպանական եւ սոցիալական պարամետրեր: | - |
| 1.8 | Վիճակի վերաբերյալ հաշվետվություններ. Գործատուի կազմում գործող Ծրագրի իրականացման գրասենյակը տարեկան կտրվածքով նախապատրաստում եւ ՎՋԵԲ է ներկայացնում Բնապահպանական եւ սոցիալական բոլոր հարցերի վիճակի վերաբերյալ | Բնապահպանական եւ սոցիալական բոլոր հարցերն ու ազդեցությունները պատշաճ կերպով լուծվում են. Կատարման հաշվետվությունները հրապարակվել են | ԱՊ1-10 ՎՋԵԲ լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, գործատու | Ծրագրի յուրաքանչյուր առանցքային փուլի ժամանակ կամ ԲՍԿԾ-ում | Զեկույցներ, որոնք պատրաստվել եւ ներկայացվել են ՎՋԵԲ-ին | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հաշվետվություններ, այդ թվում՝ Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների պլանի իրականացման հաշվետվության կարգավիճակի վերաբերյալ հաշվետվություններ՝ տարեկան կտրվածքով<br><br>Բնապահպանական եւ սոցիալական հաշվետվություններ ծրագրի ընդհանուր կատարման վիճակի վերաբերյալ | | | | ներառված հիմնական գործողութ յուններն ավարտելու ց հետո | | |
| 1.9 | Ծրագրի շինարարության եւ շահագործման փուլերի համար Բնապահպանական եւ սոցիալական կառավարման համակարգի (ԲՍԿՀ) մշակում եւ ներդրում: ԲՍԿՀ-ն պետք է օգտագործի ազգային ստանդարտները եւ ՎԶԵԲ-ի կատարողականի պահանջները որպես համապատասխանության չափանիշներ: ԲՍԿՀ-ի եւ ուսուցման համար համապատասխան բյուջեի ապահովում: | Բնապահպանական եւ սոցիալական կառավարման բացակայությունը կարող է հանգեցնել աշխատավայրում դժբախտ պատահարների եւ միջադեպերի, ինչպես նաեւ կարգավորիչ պահանջների չկատարման: | ՎԶԵԲ ԱՊ1 լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու եւ ենթակապալառուներ (եթե այդպիսիք կան) | Նախագծի շինարարու թյան փուլի մեկնարկից առաջ պատրաստ ված ԲՍԿՀ | Ընկերությունը պետք է ունենա Բնապահպանական եւ սոցիալական կառավարման համակարգ (ԲՍԿՀ) նախագծի մեկնարկից առաջ:<br>Կապալառուների ԲՍԿՀ-ի տարեկան վերանայում ընկերության ԲՍԿՀ ղեկավարի կողմից: | - |
| 1.10 | Բնապահպանական քաղաքականության մշակում՝ որպես իրենց ԲՍԿՀ-ի մաս | Քաղաքականությունը կօգնի սահմանել բնապահպանական եւ սոցիալական նպատակները | ՎԶԵԲ ԱՊ1 լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու եւ ենթակապալառուներ (եթե այդպիսիք կան) | Ըստ ԲՍԿՀ-ի վերեւում տրված ժամանակ ացույցի | Բնապահպանական եւ սոցիալական քաղաքականության մշակում եւ ընկերության միջոցով քաղաքականության փոխանցում Ընկերության եւ ենթակապալառուի ամբողջ անձնակազմին | - |

| Թիվ | Գործողություն | Բնապահպանական եւ սոցիալական ռիսկեր (Պարտավորություն/առավելութ յուններ) | Պահանջ (Օրենսդրական, ՎՋԵԲ, ԱՊ Լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն | Ժամանակացույց | Թիրախ եւ հաջող իրականացման գնահատման չափանիշներ | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱՊ2** | **Աշխատանքային եւ արտադրական պայմանները** | | | | | | |
| 2.1 | Մանրամասն նախագծման ընթացքում գնահատել շինարարական աշխատուժի եւ անվտանգության անձնակազմի պահանջները: Հաշվի առնել աշխատուժի ներհոսքի հնարավոր ռիսկերը եւ համապատասխան աշխատանքային պայմանների անհրաժեշտությունը: Համոզվել, որ մրցութային փաստաթղթերը պարունակում են աշխատանքային պայմանների եւ աշխատանքային հարաբերությունների կառավարման հստակ պահանջներ: | Շինարարական աշխատուժի ներհոսքը կարող է լրացուցիչ բեռ առաջացնել քաղաքային ծառայությունների եւ բնակարանային շինարարության վրա: Աշխատանքային պայմանների բացակայությունը կարող է ռիսկ ներկայացնել նախագծի համար եւ ուշացումներ առաջացնել՝ պայմանավորված աշխատանքային եւ կացարանային անբավարար պայմաններով: | ԱՊ2 ՎՋԵԲ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Մանրամասն նախագծման/ՇՄՍԱԳ փուլում | Աշխատուժի եւ պահանջվող աշխատանքային պայմանների գնահատում՝ ներկայացված Բանկին՝ վերանայման եւ հաստատման համար: | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2.2 | Ապահովել, որ կապալառուները ունենամ մարդկային ռեսուրսների քաղաքականություն եւ գրավոր աշխատակիցների փաստաթղթեր՝ համապատասխան ՎՁԵԲ-ի չափորոշիչներին եւ ուղեցույցներին. մարդկային ռեսուրսների քաղաքականություն եւ աշխատակիցների փաստաթղթեր | Մարդկային ռեսուրսների թափանցիկ ընթացակարգերի եւ գրավոր փաստաթղթերի բացակայությունը Ծրագրի համար կարող է հանգեցնել բացասական հետեւանքների, ուշացումների եւ համբավային խնդիրների ռիսկերի: | ՎՁԵԲ ԱՊ2 | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Համապատասխան պահանջները ներառված են մրցույթի տեխնիկական փաստաթղթերում | Կապալառուների մարդկային ռեսուրսների քաղաքականության եւ աշխատակիցների վերաբերյալ փաստաթղթերի ամփոփում, որոնք ներառված են Բանկին ներկայացվող տարեկան բնապահպանական եւ սոցիալական զեկույցի մեջ: | - |
| | | | | | | | |
| 2.3 | Ստեղծել եւ ներդնել բոլոր աշխատակիցների համար (որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավվել են Ծրագրի շրջանակում աշխատելու համար) հասանելի բողոքների ներկայացման մեխանիզմ՝ համապատասխան ՎՁԵԲ-ի ԱՊ2-ին: Աշխատակիցների բողոքարկման մեխանիզմ: Բողոքարկման | Աշխատակիցների բողոքների ղեկավարում | ԱՊ2 ՎՁԵԲ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Մեխանիզմի պատրաստ լինելը վաղ աշխատանքների համար: Կիրառումը շինարարության եւ շահագործման ողջ ընթացքում: | Գործում է բողոքարկման մեխանիզմը:<br><br>Աշխատողները տեղեկացված են նախնական փուլում:<br><br>Հաղորդակցության եւ բողոքարկման մեխանիզմի ներդրման ապացույցներ | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մեխանիզմը պետք է հնարավորություն տա բանավոր անանուն բողոքների ներկայացման եւ գրանցման, ինչպես նաեւ սահմանի բողոքների գրանցման, ընդունման եւ քննարկման հստակ ժամկետներ: Պետք է վարվի բողոքների գրանցամատյան | | | | | | |
| 2.4 | Ապահովել բողոքների ներկայացման մեխանիզմի ներդնումը Ծրագրի իրականացման բոլոր փուլերի ընթացքում | Աջակցել աշխատակիցների եւ նրանց կազմակերպությունների համար բողոքների ներկայացման մեխանիզմի ներդրմանը՝ աշխատավայրի հետ կապված մտահոգությունները բարձրաձայնելու նպատակով | ԱՊ2 ՎՁԵԲ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Ծրագրի գործողություններն սկսելուց հետո մինչեւ Ծրագրի ավարտը | Բանկի դիտանցման տարեկան հաշվետվություններում ներառված տեղեկություններ՝ գրանցված եւ լուծված բողոքների վերաբերյալ | - |
| 2.5 | Ապահովել, որ ծրագրի շրջանակում ներգրավված աշխատակիցներին տրամադրվող ցանկացած կացարան նախագծված, կառուցված լինի եւ սպասարկվի ՎՁԵԲ-ի, ՄՖԿ-ի ուղեցույցներին համապատասխան՝ [Աշխատողների կացարան](#) | Բարելավել աշխատանքային եւ արտադրական պայմանները | ԱՊ2 ՎՁԵԲ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Աշխատակիցների համար նախատեսված կեցավայրերի հիմնական առանձնահատկություններն սահմանող փաստաթղթի ներկայացում՝ ուղեկցված վիզուալ նյութերով | - |

| Թիվ | Գործողություն | Բնապահպանական եւ սոցիալական ռիսկեր (Պարտավորություն/առավելություններ) | Պահանջ (Օրենսդրական, ՎՉԵԲ, ԱՊ Լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն | Ժամանակացույց | Թիրախ եւ հաջող իրականացման գնահատման չափանիշներ | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱՊ3** | **Ռեսուրսների արդյունավետությունը եւ աղտոտման կանխարգելումն ու հսկողությունը** | | | | | | |
| 3.1 | Համոզվել, որ մրցույթի տեխնիկական բնութագրերը ներառում են շենքերը նախագծելու պահանջ՝ համապատասխանեցնելով ԷԲՆՈՒ (էներգաարդյունավետության եւ բնապահպանական նախագծման ուղեցույց) ծրագրի միջոցով կանաչ շենքերի հավաստագրմանը: | Կայուն կանաչ զարգացման եւ շինարարական պրակտիկայի խթանում | ԱՊ3 ՎՉԵԲ<br>«Էներգաարդյունավետ եւ բնապահպանական նախագծման ուղեցույց» (ԷԲՆՈւ) | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Նախագծման փուլում, շինարարության ընթացքում եւ նախագծի իրականացման ողջ ընթացքում | ԷԲՆՈւ-ի՝ նվազագույնը Արծաթե հավաստագրի ձեռքբերում | - |
| 3.2 | Մանրամասն նախագծման եւ շրջակա միջավայրի ու սոցիալական ազդեցության գնահատման գործընթացում բացահայտել ռեսուրսների արդյունավետության (ջուր, օգտագործում, գազ եւ էլեկտրաէներգիա), թափոնների | Օգտագործել լավագույն հասանելի մեթոդները՝ ռեսուրսների օգտագործումը օպտիմալացնելու եւ շրջակա միջավայր աղտոտիչների արտանետումը արդյունավետորեն կանխելու եւ վերահսկելու համար: | ԱՊ3 ՎՉԵԲ<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, խորհրդատուներ | Մանրամասն նախագծման եւ ՇՄՍԱԳ գործընթացի ընթացքում | Տեղեկատվություն՝ Բանկի կողմից ընդունված մանրամասն նախագծի եւ ՇՄՍԱԳ-ի հաշվետվության մեջ նշված Ծրագրի այլընտրանքների եւ ռեսուրսների արդյունավետության միջոցառումների վերաբերյալ | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վերամշակման եւ նախագծի համար կիրառելի նյութերի վերաօգտագործման վերաբերյալ լավագույն փորձի առկա տարբերակներն ու այլընտրանքները: | | | | | | |
| 3.3 | Թարմացնել արտանետումների նախնական գնահատումները բնապահպանական եւ սոցիալական ազդեցության գնահատման գործընթացում՝ օգտագործելով Ծրագրի մանրամասն տվյալները | Վեր հանել եւ գնահատել օդային արտանետումների հետ կապված ռիսկերն ու ազդեցությունները | ԱՊՅ ՎՉԵԲ<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, խորհրդատուներ | Որպես ՇՄՍԱԳ-ի գործընթացի մաս | Բանկի կողմից ընդունված ՇՄՍԱԳ հաշվետվության մեջ ներառված տեղեկատվություն՝ օդային արտանետումների հետ կապված ռիսկերի եւ ազդեցությունների վերաբերյալ | - |
| 3.4 | Թարմացնել թափոնների կառավարման ենթադրվող ազդեցությունները բնապահպանական եւ սոցիալական ազդեցության գնահատման գործընթացի ընթացքում՝ օգտագործելով Ծրագրի նախագծման մանրամասն տվյալները | Վեր հանել եւ գնահատել թափոնների կառավարման հետ կապված ռիսկերն ու ազդեցությունները | ԱՊՅ ՎՉԵԲ<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, խորհրդատուներ | Որպես ՇՄՍԱԳ-ի գործընթացի մաս | Բանկի կողմից ընդունված ՇՄՍԱԳ հաշվետվության մեջ ներառված տեղեկատվություն՝ թափոնների կառավարման հետ կապված ռիսկերի եւ ազդեցությունների վերաբերյալ | - |
| 3.5 | Մշակել թափոնների | Improper disposal of construction | ԱՊՅ ՎՉԵԲ | Ծրագիրն իրականացնող | Նախագծի | Շինարարության | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կառավարման պլան եւ ապահովել թափոնների կառավարման կանոնակարգերի պահպանումը շինարարության եւ շահագործման ընթացքում: | waste could lead to pollution incidents and complaints. | Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | գործակալություն, ԾԻԳ, կապալառու | իրականացման ողջ ընթացքում | փուլում շինարարական հրապարակների երկամսյա ստուգումներ | |
| 3.6 | Շինարարության եւ շահագործման փուլերի համար ՇՄՍԱԳ-ով սահմանված հսկողության ներկառուցված միջոցները եւ մեղմացման միջոցառումները ներառել Ծրագրի համապատասխան նախագծային փաստաթղթերում, տեղանքի հատակագծի պլաններում, աշխատանքային գրաֆիկներում, ընթացակարգերում, ձեռնարկներում եւ կառավարման պլաններում: | Մեղմացմանն ուղղված միջոցառումների բարձր արդյունավետություն | ԱՊՅ ՎՁԵԲ<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, | Որպես ՇՄՍԱԳ-ի գործընթացի մաս եւ մրցութային փաստաթղթերի մշակման ընթացքում | Բանկի կողմից ընդունված ՇՄՍԱԳ-ի հաշվետվության եւ մրցույթի տեխնիկական պայմանների մեջ ներառված տեղեկատվություն | - |
| 3.7 | Հիմնվելով շինարարության տեղամասի ռիսկերի գնահատման եւ | Վտանգավոր նյութերի ոչ պատշաճ ապամոնտաժումը, պահեստավորումը, տեղափոխումը եւ օգտագործումը/հեռացումը | ԱՊՅ ՎՁԵԲ<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Նախնական աշխատանքներ, հիմնական աշխատանքներ: | Ծրագիրը ներդրվել է:<br><br>Վտանգավոր նյութերը | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | քանակական հաշվարկների վրա՝ վտանգավոր նյութերի կառավարման պլանի պատրաստում:<br><br>Մեթոդաբանության հայտարարություն եւ ֆիզիկական եւ կենսաբանական վերականգնման հատուկ պլանի պատրաստում՝ նախագծի տարածքում առկա ցանկացած աղտոտվածության վերացման համար: | կարող է հանգեցնել աղտոտման միջադեպերի, հրդեհների, աշխատողների առողջության վրա ազդեցության եւ բողոքների: | | | | վերահսկվում են:<br><br>Սեւ նավթի մնացորդները անվտանգ կերպով հեռացվել են տարածքից եւ/կամ ժամանակավորապես պահվել են Վտանգավոր նյութերի կառավարման պլանի պահանջների համաձայն: | |
| 3.8 | Կիրառել խորհրդատուի կողմից ԷԲՆՍւ գնահատման շրջանակներում առաջարկվող միջոցառումները՝ կլիմայական խոցելիության բացահայտված ռիսկը լուծելու համար: Հատուկ միջոցառումները պետք է հաշվի առնեն հետեւյալի համապատասխան ապահովումը.<br>• Բնակավայրի պաշտպանություն կամ վերականգնում<br>• Անձրեւաջրերի | Կլիմայական ռիսկերի նկատմամբ հարմարվողականության եւ դիմադրողականության բարձրացում:<br>Հատկապես կապված՝<br>• Ջրհեղեղների,<br>• Ծայրահեղ ջերմաստիճանների,<br>• Ձյան տեղումներ եւ սառույցի հետ | ՎՉԵԲ ԱՊՅ<br>Կանաչ տնտեսության անցման ձեռնարկ (ԿՏԱ) | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, Նախագծող, Կապալառուներ | Նախագծումից մինչեւ կառույցի շինարարություն եւ շահագործում | Մրցութային պայմանները, կապալառուների առաջարկներն ու պայմանագրերը ներառում են պահանջվող պարամետրերը | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կառավարում<br>• Ջերմային կղզյակի կրճատում<br>• Արտաքին ջրօգտագործման կրճատում<br>• Ջերմային հարմարավետություն | | | | | | |

| Թիվ | Գործողություն | Բնապահպանական եւ սոցիալական ռիսկեր (Պարտավորություն/առավելություններ) | Պահանջ (Օրենսդրական, ՎՋԵԲ, ԱՊ Լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն | Ժամանակացույց | Թիրախ եւ հաջող իրականացման գնահատման չափանիշներ | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՊ4 | Առողջություն եւ անվտանգություն | | | | | | |
| 4.1 | Իրականացնել Ամրողջականության ուսումնասիրություն Ծրագրի տեղամասի հարեւանությամբ գտնվող բնակելի տարածքի հարակից շենքերի համար եւ փաստաթղթավորել դրանց տեխնիկական վիճակը, թարմությունը, ակտիվ գազի, ջրի եւ էլեկտրական ցանցերի միացումը ((հատկապես որոնք կարող են օգտագործվել Ծրագրի տեղանքի հետ համատեղ) եւ ցանկացած կառուցվածքային խնդիր: Գնահատել հարակից շենքերի վրա բացասական ազդեցության ռիսկը՝ հիմնվելով տարածքում նախատեսված քանդման եւ շահագործումից դուրս բերման գործողությունների | Պլանավորված քանդումը (հատկապես պայթեցման կիրառմամբ) եւ շինարարական աշխատանքները կարող են վտանգ ներկայացնել հարակից շենքերի եւ շինությունների ամրողջականությանը: | | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, նախագծողներ, կապալառուներ | Վարկը աշխատանքների/կապիտալ ծախսերի համար մասհանելուց առաջ եւ ամեն դեպքում՝ տարածքի մաքրման աշխատանքները սկսելուց առաջ | Ամրողջականության ուսումնասիրության հաշվետվությունը ներկայացվում է Բանկին վերանայման եւ հաստատման համար | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մոդելավորման վրա: Հիմնվելով ռիսկերի մոդելավորման վրա՝ մշակել եւ իրականացնել անվտանգ շահագործումից դուրս բերման պլան | | | | | | |
| 4.2 | Շրջակա միջավայրի եւ սոցիալական ազդեցության գնահատման գործընթացի ընթացքում թարմացնել հասարակության առողջության եւ անվտանգության վրա ազդեցությունների գնահատումը՝ կապված օդի արտանետումների, աղմուկի, տատանումների եւ երթեւեկության հետ: | Բացահայտել եւ գնահատել ռիսկերը եւ դրանց ազդեցությունը հասարակության առողջության եւ անվտանգության վրա | ԱՊ4 ՎՉԵԲ<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ | Որպես ՇՄՍԱԳ գործընթացի մաս | Բանկի կողմից ընդունվում է ՇՄՍԱԳ հաշվետվության մեջ ներառված տեղեկատվություն | - |
| 4.3 | Հիմնվելով մանրամասն նախագծի, ծավալների հաշվարկի, շինարարական սարքավորումների եւ մեքենաների տեղափոխման գնահատականների, ինչպես նաեւ մաքսային եւ լոգիստիկ կենտրոնի նախատեսված թողունակության վրա՝ պատվիրել եւ ավարտել երթեւեկության եւ | Ճանապարհային երթեւեկության եւ ծանր տեխնիկայի տեղափոխման աճը կարող է բացասաբար անդրադառնալ ճանապարհների որակի եւ հասարակության անվտանգության վրա: | ՎՉԵԲ ԱՊ4 | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, նախագծողներ, կապալառուներ | Որպես մանրամասն նախագծի մաս եւ ամեն դեպքում՝ տարածքի մաքրման աշխատանքների մեկնարկից առաջ | Երթեւեկության եւ ճանապարհային անվտանգության մասին հաշվետվությունը ներկայացվում է Բանկին վերանայման եւ հաստատման համար | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ճանապարհային անվտանգության ուսումնասիրությունը: Խուսափել համայնքային բանուկ ճանապարհներից, որոնք հատկապես օգտագործվում են երեխաների եւ այլ խոցելի օգտվողների կողմից: Փաստաթղթավորել Մաքսային եւ լոգիստիկ կենտրոնի կառուցման եւ շահագործման համար օգտագործվող ճանապարհների կարգավիճակը: Համակարգել երթեւեկության երթուղիները, ինչպես նաեւ ճանապարհների ժամանակավոր փակման եւ շրջանցիկ ճանապարհների հարցը ճանապարհային ոստիկանության հետ: Օգտագործել ճանապարհորդության կառավարման պլաններ | | | | | | |
| 4.4 | Կիրառել Խորհրդատուի կողմից առաջարկված հասարակական անվտանգության միջոցառումները՝ հիմնվելով սոցիալական ազդեցության գնահատման արդյունքների վրա: | Հասարակության վրա ճանապարհային անվտանգության ազդեցության մեղմացում | ԱՊ4 ՎՋԵԲ<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառուներ | Ծրագրի գործողությունների մեկնարկից հետո մինչեւ Ծրագրի ավարտը | Մոնիտորինգի տարեկան հաշվետվություններ Բանկի համար | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4.5 | Շինարարության փուլում պատրաստել պայթեցման Մեթոդական առաջադրանք (նախքան պայթեցման աշխատանքների իրականացումը) եւ ներկայացնել այն հաստատման | Պայթեցման գործողությունները կարող են բազմաթիվ վտանգներ ներկայացնել (Փոշու արտանետումներ, օպերատորների, աշխատողների կամ հանրության վնասվածքներ, մոտակա կառույցների թուլացում, քարերի նետում եւ այլն), եւ եւ պետք է իրականացվի պատշաճ ձեւով ռիսկերը նվազեցնելու նպատակով | ԱՊ4 ՎՁԵԲ Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Հողի մաքրման աշխատանքների մեկնարկից առաջ մշակված եւ հաստատված Մեթոդական առաջադրանք: Շինարարության ընթացքում ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումները: Շենքերի ամբողջականությունը վերստուգվում է քանդման ավարտից հետո եւ համեմատվում սկզբնական վիճակի հետ: | Յուրաքանչյուր պայթեցման գործողության համար առանձին SEMP եւ մեթոդական առաջադրանքներ՝ հաստատված ինժեների/վերահսկող մարմնի կողմից: Անվտանգության պահանջները, որոնք իրականացվել են մինչեւ պայթեցման աշխատանքների մեկնարկը | - |
| 4.6 | Բոլոր կառույցների կառուցվածքային նախագծումը համապատասխանեցնել գործող ազգային կանոնակարգերին եւ միջազգային լավագույն փորձին: | Նախատեսված գործունեության տարածքի արեւելյան հատվածը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, իսկ արեւմտյան մասը՝ 2-րդ սեյսմիկ գոտում: | ԱՊ4 ՎՁԵԲ Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Սկսած նախագծման փուլից եւ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում | Պետք է պահպանվեն շենքերի նախագծման համապատասխան ստանդարտները, ինչպիսիք են Ազգային սեյսմիկ RABC II-6.02-2006 օրենսգիրքը: | - |
| 4.7 | Ծրագրի շինարարության փուլում մշակել միջոցառումներ եւ ընթացակարգեր՝ աշխատողներին ծայրահեղ եղանակային պայմաններից (ցուրտ, շոգ, ուժեղ քամի եւ այլն) պաշտպանելու համար: | Ծայրահեղ շոգի հետ կապված վնասվածքների կամ պարտավորությունների կրճատում: Աշխատողների առողջությունն ու բարեկեցությունը պաշտպանված են: | ՎՁԵԲ ԱՊ4 | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Նախքան շինարարական աշխատանքները սկսելը | Շինարարության ողջ ընթացքում մշակվել եւ իրականացվել են ջերմության/ցրտի ռիսկերի կառավարման միջոցառումներ եւ ընթացակարգեր: | - |

| Թիվ | Գործողություն | Բնապահպանական եւ սոցիալական ռիսկեր (Պարտավորություն/առավելություններ) | Պահանջ (Օրենսդրական, ՎՉԵԲ, ԱՊ Լավագույն գործելակերպ) | Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն | Ժամանակացույց | Թիրախ եւ հաջող իրականացման գնահատման չափանիշներ | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՊ5 | Հողատարածքի ձեռքբերում, հարկադիր վերաբնակեցում եւ տնտեսական տեղաշարժ | | | | | | |
| 5.1 | Երբ ծրագրի մանրամասն ձեւավորումն ավարտված լինի, պատվիրատուն պետք է հաստատի ՎՉԵԲ-ին, որ նախագծի, դրա բաղադրիչների, այդ թվում՝ սանիտարական գոտիների կիրառման հետ կապված հողային սեփականության ձեռքբերման, վերաբնակեցման կամ հողօգտագործման սահմանափակումներ չկան՝ ներկայացնելով պատշաճ ստուգման փաստաթուղթ :<br><br>Եթե հայտնաբերվեն հողատարածքների | Հայտնաբերել եւ գնահատել հողատարածքների ձեռքբերման հետ կապված ռիսկերը եւ ազդեցությունները: | ԱՊ5 ՎՉԵԲ<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ | Պատշաճ ստուգման գրություն, որը ներկայացվել է ՎՉԵԲ-ին՝ մինչեւ ծրագրի մանրամասն ձեւավորման վերջնական ընդունումը:<br><br>ՎՊ ավարտական հաշվետվություն, որը ներկայացվում է ՎՉԵԲ-ին՝ նախքան ազդեցությունների առաջացման գործընթացը: | Պատշաճ ստուգման փաստաթուղթը ներկայացված է:<br><br>ՎՊ ավարտական հաշվետվությունը ներկայացված է: | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ձեռքբերման եւ վերաբնակեցման ազդեցություններ, պատվիրատուն պետք է պատրաստի, հրապարակայնացնի, հաստատի եւ իրականացնի ԱՊ5-ին համապատասխան Վերաբնակեցման պլան (ՎՊ)։ ՎՊ-ն պետք է իրականացվի՝ մինչեւ տեղահանման ազդեցությունների առաջացումը։<br><br>ՎՊ-ի իրականացումը պետք է հաստատվի՝ ՎՊ-ի ավարտական հաշվետվություն պատրաստելով եւ այն ՎԶԵԲ-ի հաստատմանը ներկայացնելով։ | | | | | | |
| **Թիվ** | **Գործողություն** | **Բնապահպանական եւ սոցիալական ռիսկեր**<br>**(Պարտավորություն/առավելություններ)** | **Պահանջ**<br>**(Օրենսդրական, ՎԶԵԲ, ԱՊ Լավագույն գործելակերպ)** | **Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն** | **Ժամանակացույց** | **Թիրախ եւ հաջող իրականացման գնահատման չափանիշներ** | **Կարգավիճակ** |
| **ԱՊ6** | **Կենսաբազմազանություն եւ կենդանի բնական ռեսուրսներ** | | | | | | |
| 6.1 | Թարմացնել կենսաբազմազանության վրա հնարավոր | Գնահատել նախագծի ազդեցությունները կենսաբազմազանության վրա։ | ԱՊ5 ՎԶԵԲ<br>Ազգային | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ | Որպես ՇՄՍԱԳ գործընթացի մաս։ | ՇՄՍԱԳ հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, որը | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ազդեցությունների վերաբերյալ տվյալները՝ ԾՄՍԱԳ գործընթացի ընթացքում՝ օգտագործելով մանրամասն նախագծային տվյալներն ու շրջակա միջավայրի վերաբերյալ հիմնային տեղեկատվությունը: | | օրենսդրություն<br>Լավագույն փորձ | | | ընդունվում է Բանկի կողմից: | |
| ԱՊ7 | **Բնիկ ժողովուրդ** | | | | | | |
| *Այս պահանջը կիրառելի չէ Ծրագրի շրջանակներում* | | | | | | | |
| ԱՊ8 | **Մշակութային ժառանգություն** | | | | | | |
| 8.1 | Թարմացնել մշակութային ժառանգության վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ տվյալները՝ ԾՄՍԱԳ գործընթացի ընթացքում՝ օգտագործելով մանրամասն նախագծային տվյալներն ու շրջակա միջավայրի վերաբերյալ հիմնային տեղեկատվությունը: | Գնահատել նախագծի ազդեցությունները մշակութային ժառանգության վրա: | ԱՊ8 ՎԶԵԲ<br>Ազգային օրենսդրություն<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ | Մինչեւ ԾՄՍԱԳ գործընթացի ավարտը: | ԾՄՍԱԳ հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, որը ընդունվում է Բանկի կողմից: | - |
| 8.2 | Պատրաստել պատահական հայտնաբերումների | Նվազեցնել մշակութային ժառանգության վրա ազդեցությունների ռիսկը: | ԱՊ8 ՎԶԵԲ<br>Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Մինչ շինարարական աշխատանքների | Գործող ընթացակարգ | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վերաբերյալ ընթացակարգեր՝ նախագծում ներգրավված կապալառուների համար, եւ այդ ընթացակարգերի իրականացման պահանջները ներառել մրցութային փաստաթղթերում եւ աշխատանքային պայմանագրերում: Կազմակերպել աշխատողների վերապատրաստում (եւ պահանջել, որ կապալառուներն էլ վերապատրաստումներ անցկացնեն)՝ հնարավոր պատահական հայտնաբերումների բնույթի եւ դրանց կառավարման կարգի վերաբերյալ: | | | | մեկնարկը: | Վերապատրաստումները իրականացվել եւ արձանագրվել են:<br><br>Պատահական հայտնագործությունների վերաբերյալ հաշվետվություն (եթե այդպիսիք եղել են): | |
| **Թիվ** | **Գործողություն** | **Բնապահպանական եւ սոցիալական ռիսկեր**<br>**(Պարտավորություն/առավելություններ)** | **Պահանջ**<br>**(Օրենսդրական, ՎԶԵԲ, ԱՊ Լավագույն գործելակերպ)** | **Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն** | **Ժամանակացույց** | **Թիրախ եւ հաջող իրականացման գնահատման չափանիշներ** | **Կարգավիճակ** |
| **ԱՊ10** | **Տեղեկությունների բացահայտում եւ շահառուների ներգրավում** | | | | | | |
| 10.1 | Իրականացնել | Ապահովել շահագրգիռ կողմերի | ԱՊ10 ՎԶԵԲ | Ծրագիրն իրականացնող | Մինչեւ ՇՄՍԱԳ | ՇՄՍԱԳ հաշվետվության | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | շահագրգիռ կողմերի նույնականացում եւ վերլուծություն՝ ՇՄՍԱԳ շրջանակների սահմանման ընթացքում: | ներգրավվածությունը: | Լավագույն փորձ | գործակալություն, ԾԻԳ | գործընթացի ավարտը: | մեջ ներառված տեղեկատվությունը, որը ընդունվում է Բանկի կողմից: | |
| 10.2 | Սահմանել եւ պահպանել արդյունավետ համայնքային բողոքարկման մեխանիզմ: | Ապահովել շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավվածությունը եւ լավ հարաբերությունների պահպանումը համայնքի հետ: | ԱՊ10 ՎՋԵԲ Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ | Նախնական աշխատանքների փուլից սկսած՝ շարունակելով շինարարության եւ շահագործման բոլոր փուլերում | Բողոքների գրանցումները պահպանվում են, իսկ դրանց լուծումն իրականացվում է ժամանակին: | - |
| 10.3 | Ապահովել, որ համայնքային բողոքարկման մեխանիզմը գործարկվի նախագծի իրականացման բոլոր փուլերում: | Աջակցել շահագրգիռ կողմերի համար բողոքարկման մեխանիզմին, որպեսզի նրանք կարողանան բարձրացնել նախագծի հետ կապված իրենց մտահոգությունները: | ԱՊ10 ՎՋԵԲ Լավագույն փորձ | Ծրագիրն իրականացնող գործակալություն, ԾԻԳ, կապալառու | Նախագծի գործունեության մեկնարկից մինչեւ դրա ավարտը: | Գրանցված եւ լուծված բողոքների վերաբերյալ տվյալները ներառված են Բանկին ներկայացվող տարեկան մոնիթորինգի հաշվետվություններում: | - |

# ՀԱՎԵԼՎԱԾ 5. «ԿԱՆԱՉ» ՆԱԽԱԳԾԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ

| Կատարողականի առանցքային ցուցանիշները | Հաշվետվություն ներկայացնելու հաճախականությունը | Առաջին հաշվետու ժամանակահատվածը՝ մինչեւ |
|---|---|---|
| LEED-ի առնվազն արծաթե կամ համարժեք մակարդակի կանաչ շինարարության հավաստագրի ձեռքբերում՝ այն միավորների վերաբերյալ տեխնիկական փորձագետի առաջարկությունների համաձայն, որոնք պետք է ձեռք բերել | Մեկ անգամ՝ հավաստագիրը ձեռք բերելուց հետո | 2030 թվականին կամ աշխատանքները գործնականում ավարտելուց հետո 6 ամսվա ընթացքում |
| Նախագծման հետ կապված ֆիզիկական կլիմայական ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ համաձայն տեխնիկական փորձագետների առաջարկությունների, որոնք ներկայացված են վերջնական մանրամասն նախագծով եւ կատարողական նախագծով | Երկու անգամ՝ մանրամասն նախագիծը եւ կատարողական նախագիծն ավարտելուց հետո | 2027 թվականին կամ մանրամասն նախագիծն ավարտին հասցնելուց հետո<br><br>2030 թվականին կամ աշխատանքները գործնականում ավարտելուց հետո 6 ամսվա ընթացքում |
| Գործառնական ֆիզիկական կլիմայական ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ համաձայն տեխնիկական փորձագետների առաջարկությունների | Տարեկան | 2031 թվականին կամ գործողություններն սկսելուց մեկ տարի հետո |
| Էլեկտրաէներգիայի տարեկան սպառում [ՄՎտժ/տարի] | Տարեկան | 2031 թվականին կամ գործողություններն սկսելուց մեկ տարի հետո |
| Բնական գազի տարեկան սպառում [ՄՎտժ/տարի] | Տարեկան | 2031 կամ գործողություններն սկսելուց մեկ տարի հետո |
| Տեղադրված արեւային ՖՎ կայանի հզորությունը [կՎ] | Մեկ անգամ՝ աշխատանքները գործնականում ավարտելուց հետո | 2030 թվականին կամ աշխատանքները գործնականում ավարտելուց հետո 6 ամսվա ընթացքում |
| Երեւանի ՄԼԿ-ում մաքսազերծում անցնող բեռնատարների թիվը | Տարեկան | 2031 թվականին կամ գործողություններն սկսելուց մեկ տարի հետո |
| Ուղեւորությունը Երեւանի ՄԼԿ-ում ավարտող բեռնատարների թիվը (այսինքն՝ այն, մաքսազերծումից բացի, նաեւ լոգիստիկայի եւ պահեստավորման համար օգտագործելը) | Տարեկան | 2031 թվականին կամ գործողություններն սկսելուց մեկ տարի հետո |